


ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԱՊՊԱՐԻ, ՄՈՒՍԼԵՄԻ ԵՒ ՊՐՈԺՐՏԻ ՄԻՋԵՒ

Սուրիական «Ալ Ուաթան» թերթին համաձայն, Երկուշաբթի, 30 Ապրիլ 2018-ին, Սուրիոյ խորհրդարանի նախագահ Յամուտա Սապպադի հետ իր հանդիպումին ընթացքին, Իրանի իսլամական խորհրդարանի արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության յանձնախումբի նախագահ Ալա Ատտին Պրոժրտի շեշտեց Իրանի և Սուրիոյ միջև խորհրդարանական յարաբերություններու զարգացման կարելու թիւնը՝ դիտել տալով, որ երկու երկիրներուն յարաբերությունները կայուն են, որովհետեւ Իրան և Սուրիա ռազմավարական դաշնակիցներ են:



Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ուալիտ Մուալլեմ եւս հանդիպում ունեցաւ Պրոժրտիի հետ: Կողմերը խորհրդակցեցան երկու բարեկամ երկիրներուն միջև գանձան ոլորտներու առնչուող յարաբերությունները զարգացնելու մասին: Անոնք քննարկեցին նաեւ միջազգային և տարածաշրջանային քաղաքական ու ռազմական վտանգաւոր զարգացումները, յատկապէս ամերիկեան, բրիտանական և ֆրանսական եռակողմ գրոհն ու իսրայելեան շարունակուող յարձակումները Սուրիոյ ուղղութեամբ:

Երեքշաբթի, 1 Մայիսին, Պրոժրտի մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց, թէ տարածաշրջանին մէջ Սուրիան դիմադրութեան առաջին գիծը կը հանդիսանայ, իսկ Իրան կը շարունակէ պաշտպան հանդիսանալ դիմադրութեան առանցքին՝ դատապարտելով Սուրիոյ դէմ մղուած ահաբեկչական պատերազմը: Ան շնորհաւորեց Սուրիոյ ժողովուրդը ահաբեկչութեան դէմ իր նուաճած յաղթանակին առիթով և հաստատեց, որ մօտօրէն բոլորս ականատեսը պիտի դառնանք Սուրիոյ վերածաղկումին:

ՀԱԼԷՊԻ ՄԷՋ ՀԱՅ ԵՒ ԲՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ, ՍՈՒՐԻԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ, ԵՐԵՎՈՒՍԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀԱԼԷՊԱՀԱՅ ՄՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՌՅՈՒՅԻՉՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ ԲՈՂՈՔԻ ՀԱԽԱՔ ԸՆԴՂԵՄ ԹՈՒՐԵՈՅ ՅԵՂԱՍՊԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Կազմակերպութեամբ Սուրիոյ Յայ Դատի Յանձնախումբին, Կիրակի, 22 Ապրիլ 2018-ին Զարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի շրջափակէն ներս, երե-



կոյեան ժամը 5:00-ին տեղի ունեցաւ բողոքի հաւաք ընդդէմ Օսմանեան Կայսրութեան ու անոր ժառանգորդ Թուրքիոյ 20-րդ դարու սկիզբը գործած



ոճրագործութիւններուն՝ Յայոց Յեղասպանութեան, Ասորիներու Յեղասպանութեան, Յոյներու Յեղասպանութեան, և Արաբ Ժողովուրդին դէմ ի գործ դրուած բարբարոսութիւններուն, յատկապէս Սուրիոյ մէջ վերջին տարիներու թրջական ոտնձգութիւններուն: Բողոքի հաւաքին մասնակցեցան սուրիական և



պաղեստինեան կուսակցութիւններու և կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխաններ, պետական բարձ-

Պետիկ Աշոտեան
 Շաբ. 12 11

تحت رعاية أمين فرع جامعة حلب لحزب البعث العربي الاشتراكي
 الرفيق الدكتور محمد نايف السيد
 يشرف
 نادي الشبيبة السورية الثقافي
 بدعوتكم لحضور

الأسبوع الثقافي الأرميني

في رحاب جامعة حلب 8-9-10 أيار 2018

الثلاثاء 8 أيار
 الساعة: 1:00 ظهراً
 المكان: المكتبة المركزية
افتتاح معرض يعبر عن تاريخ أرمينيا
 علماً أنّ المعرض سيستمر طيلة هذه الفعالية من الساعة 11:00 حتى 4:00 مساءً في المكتبة المركزية

الأربعاء 9 أيار
 الساعة: 1:00 ظهراً
 المكان: كلية الكهرياء المدرج الروماني
أمسية احتفالية فنية تقدمها
فرقة اسبيداك "SBIDAG BAND"

الخميس 10 أيار
 الساعة: 1:00 ظهراً
 المكان: مدرج كلية الحقوق
عرض فيلم "الوعد"
The Promise

Խմբագրական

Սուրիական Համայնքի Նուսրաթ Վստահություն

Հայոց Ցեղասպանության ոգեկոչական ձեռնարկներու նախօրէին, Սուրիոյ նախագահ տոքթ. Պաշշար ալ Ասատ եւ Առաջին Տիկին Ասմա ալ Ասատ ընդունեցին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Շահան Սրբ. Արք. Սարգիսեանն ու Ազգ. Վարչութեան եւ հայկական միութիւններու ներկայացուցիչները:

Նախագահը, այս առիթով, բարձրօրէն գնահատեց հայ համայնքին կառուցողական դերը՝ պատերազմի օրերուն Սուրիոյ դիմագրաւած ծանրագոյն դժուարութիւններու յաղթահարման մէջ: Նախագահին խօսքն ու հանդիպումէն ետք հրապարակուած նախագահական պալատին հաղորդագրութիւնը քանի մը ուղերձ կը հաղորդէին:

Այցելութիւնը առիթ էր մօտէն ծանօթանալու Բերիոյ Հայոց Թեմի գործունէութեան եւ վերականգնումի ծրագիրներուն, մտահոգութիւններուն եւ առաջարկներուն: Միւս կողմէ, Հայոց Ցեղասպանության ոգեկոչական ձեռնարկներու նախօրէին նման հանդիպումի մը կազմակերպումը ու այս մանրամասնութիւնը նախագահական պալատի պաշտօնական հաղորդագրութեան մէջ արձանագրումը այլ բան չէր, եթէ ոչ զօրակցութիւն հայ ժողովուրդին ու անոր արդար պահանջատիրութեան:

Այցելութեան երկրորդ շարժառիթը լուսարձակի տակ բերելն էր պատերազմի ընթացքին հայութեան, Սուրիական Հայրենիքի ընդհանուր շահերէն թելադրուած, հաւասարակըշուած մօտեցումն ու մշակութային, ուսումնակրթական, բարեսիրական աննահանջ գործունէութիւնը, յատկապէս Հալէպ քաղաքի պատերազմական աղիտալի օրերուն:

Այս իմաստով նախագահը կը շեշտէր թէ. «Հայրենասիրութիւնը լոկ խօսքով չեն արտայայտեր: Հայրենասիրութիւն կը նշանակէ պատկանելիութեան գագացում, հայրենի հողի պաշտպանութիւն: Կը նշանակէ, որ մեզմէ իւրաքանչիւրը իր ներդրումը բերէ ամենալաւ ձեւով, անկախ իր ազգային կամ ցեղային պատկանելիութենէն»:

Հանդիպումն ու կարծիքներու փոխանակումը հրաւեր մըն էր նաեւ նորովի թափով լծուելու վերականգնումի աշխատանքներուն, առաւել եւս բացուելու սուրիական միջավայրին՝ վերստին ծաղկեցնելու սուրիական բազմերանգ ընկերութիւնը: Այս պատգամն էր, որ նախագահը կը յղէր, երբ կ'ըսէր. «Մեր ներկայ մարտահրաւերը ոչ թէ միայն պատերազմին հետեւանքով երկրին քանդուած ենթակառոցները վերանորոգելն է, այլ վերակազմաւորելն է սուրիական ընկերութիւնը իր բազմաշերտ ու գունեղ հիւսուածքով: Այս բազմազանութիւնն է, որ կը գատորոշէ սուրիական ընկերութիւնը այլ ընկերութիւններէ»:

Նախագահը սուրիական ընկերութեան գանազան շերտերու համարկումին, գործակցութեան անդրադառնալով կարելոր կը համարէր երկրի զարգացման գործընթացին մէջ քաղաքացիական հասարակութեան դերը, համաքաղաքացիներուն միջեւ գոյութիւն ունեցող տնտեսական, մշակութային, ուսումնակրթական, քաղաքական, ընկերային փոխյարաբերութիւններու զարգացման միջոցով: Սա հրաւեր մըն էր հայ համայնքին՝ իր գործուն դերակատարութիւնը ունենալու քաղաքացիական հասարակութեան վերածելաւորման մէջ եւս:

«Հայ համայնքը փոքրամասնութիւն մը չէ այլեւս, ան անբաժան մասնիկն է սուրիական ընկերութեան», կ'եզրափակէր նախագահը՝ նորարար ծրագիրներով միասնական աշխատանքի հրաւիրելով սուրիահայութիւնը, իսկ երկրէն մեկնող սուրիահայերուն վերադարձի կոչ ուղղելով:

«Գ.»

-ՍԱՆԱ լրատու գործակալութեան համաձայն, օրերս, սուրիական կառավարութիւնը համաձայնութիւն պիտի գոյացնէ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն հետ, ըստ որուն վերջիններս դուրս պիտի գան Հոմսի հիւսիսային եւ Համայի հարաւային գիւղերէն եւ ուղղուին դէպի Իտլիպ ու Ճարապլուս:



Ըստ համաձայնութեան, զինեալ ահաբեկիչները դուրս պիտի գան երեք օրուան ընթացքին՝ յանձնելէ ետք իրենց գէնքն ու զինամթերքը:

Համաձայնութիւնը կ'ընդգրկէ նաեւ Հոմս-Համա միջազգային ճամբուն բացումը համաձայնութեան յաջորդող երեք օրերուն ընթացքին:

Սուրիական բանակը նախապէս յայտնած էր, թէ Հոմսի հիւսիսային արուարձանին ուղղութեամբ իր յառաջընթացէն ետք, զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն 72 ժամուան ընթացքին յանձնուելու եւ Իտլիպ տեղափոխուելու առիթ ընծայած է:

-ԱՄՆ-ի արտաքին գործոց նախարար Մայք Փոմփօ Յորդանան այցելութեան ընթացքին յայտնած է, որ ԱՄՆ պիտի յարգէ զինադադարի համաձայնութիւնը Սուրիոյ հարաւային շրջանին մէջ:



Փոմփօ յորդանանցի իր պաշտօնակիցին հետ միացեալ մամլոյ ասուլիսի մը ընթացքին ըսած է. «ԱՄՆ կը բաժնէ Սուրիոյ վերաբերեալ Յորդանանի տեսակետը, յատկապէս Սուրիա-Յորդանան սահմանին լարուածութեան մեղմացման գօտիներու պահպանումը», հաստատելով, որ Ուաշինկթըն կ'ողջունէ ժընեւի մէջ միջսուրիական երկխօսութեան ուղղութեամբ ՄԱԿ-ի ջանքերը՝ յանուն սուրիական ճգնաժամի քաղաքական լուծումին:

«Սուրիոյ մէջ գտնուող ԱՄՆ-ի ռազմական ուժերուն նպատակը ՏԱՀԵՇ-ին դէմ դնելն ու քիմիական զէնքերու օգտագործումը կանխարգիլելն է»:

-Երեքշաբթի, 1 Մայիս 2018-ին, Սուրիոյ վարչապետ Իմատ Խամիս սուրիական «Ուաթան» թերթին տուած հարցազրոյցի մը ընթացքին ըսաւ,



որ պաշտօնէութեան ամսականներու յաւելումը հեռակայ ծրագիր մը չէ. անկա կառավարութեան օրակարգին վրայ է. «Մենք որպէս կառավարութիւն մեր կարելին ի գործ կը դնենք ամսականներու յաւելումը նպատակային դարձնելու համար՝ առանց ելեկտրականութեան, վառելանիւթի եւ այլ ծառայութիւններու գիներու բարձրացումին»:

Խամիս դիտել տուաւ, որ ամսականներու յաւելումը մեր ուշադրութեան առարկան է, Սուրիոյ նախագահը եւս նախանձախնդիր է քաղաքացիներուն կենսամակարդակը բարելաւելու իմաստով:

-ՍԱՆԱ, յղում կատարելով զինուորական աղբիւրի մը, հաղորդեց, թէ Համայի եւ Հալէպի գիւղական շրջաններուն մէջ գտնուող զինուորական կարգ մը դիրքեր նախորդ Կիրակիէն Երկուշաբթի լուսող գիշերուան ընթացքին թիրախ դարձած են հրթիռային նոր յարձակումի մը:



Ըստ «Մայատին»ի, հրթիռակոծուած են սուրիական բանակի դաշնակից ուժերու երեք դիրքեր:

Սուրիական «Թըշրին» օրաթերթը, յղում կատարելով մարտական աղբիւրներու, հաղորդեց, որ հրթիռարձակումը կատարուած է հիւսիսային Յորդանանի մէջ գտնուող ամերիկեան եւ բրիտանական ռազմակայաններէ, եւ արձակուած են 9 թեւաւոր հրթիռներ:

Իրանեան «Մէր» լրատու գործակալութիւնը իր կարգին, յղում կատարելով իրանեան զինեալ ուժերէն աղբիւրի մը, հաղորդեց, որ Սուրիոյ մէջ իրանցի զինուորական խորհրդատուներու շարքերուն մէջ գոհեր չկան:

Լուրեր Հայաշխարհին

ՀԱՊՈՐՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Վարչապետի միասնական թեկնածուի և քաղաքական օրակարգի շուրջ համախոհությունը, որի անհրաժեշտության մասին յայտարարել էինք, կարող է դառնալ իրականություն:

Առ այդ, ՀՀ Դատախոսության Գերագույն Մարմինը որոշել է Մայիսի 1-ին կայանալիք վարչապետի ընտրություններին պաշտպանել Նիկոլ Փաշինեանի թեկնածությունը:

ՀՀ Դատախոսության Գերագույն Մարմին
29.04.2018

ՀԱՊՈՐՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՀ Դատախոսության Գերագույն Մարմինը յայտնում է, որ Երեքշաբթի, 1 Մայիսին, ՀՀ Ազգային ժողովում ԱԺ ՀՀԴ խմբակցության պատգամաւոր Աղուան Վարդանեանի հնչեցրած տեսակետը անձնական որոշում է՝ չի համապատասխանում ՀՀ Դաշնակցության պաշտոնական դիրքորոշմանը: Կատարուել է կարգապահական կոպիտ խախտում, որը կը դառնայ քննության նիւթ:



Ըստ այդմ, ՀՀ Դատախոսության ԳՄ-ն պահանջում է Աղուան Վարդանեանից վաղաժամ վայր դնել պատգամաւորական մանդատը:

ՀՀ Դատախոսության Գերագույն Մարմին
01.05.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԲԵՆԱՐԿԵՅՑ ԿԱՐՉԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 1 Մայիսին՝ ժամը 12:00-ին սկսած վարչապետի ընտրության հարցի քննարկումին նպատակով իրաւիքում յատուկ նիստը: Նիստին գրանցուեցաւ 102 պագամաւոր:



Հայաստանի Հանրապետության վարչապետի թեկնածու գրանցուեցաւ միայն «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինեան: Այլ թեկնածուները չառաջադրուեցան:

Ազգային ժողովի միւս երեք խմբակցությունները՝ ՀՀԿ-ն, «Ծառուկեան»ը եւ ՀՀԴ-ն, յայտարարեցին, թէ թեկնածու պիտի չառաջադրեն: «Ծառուկեան», ՀՀԴ խմբակցությունները սատար պիտի հանդիսանան վարչապետի պաշտօնին հաւակնող միակ թեկնածու Փաշինեանին: Իսկ ՀՀԿ յայտարարեց, որ մինչեւ վարչապետի թեկնածուին քուէարկուելը պիտի իրապարակէ խմբակցության որոշումը:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԿԱՐՉԱՊԵՏ ԳՆՏՐԵՅ

Երեքշաբթի, 1 Մայիս 2018-ին, ՀՀ Ազգային ժողովի միջօրեի ժամը 12:00-ին սկսած յատուկ նիստը անարտին հասաւ:

ԱԺ «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինեանի վարչապետ դառնալուն կողմ քուէարկեց 45, դէմ՝ 55, ձեռնպահ՝ 0 պատգամաւոր: Այսպիսով ՀՀ վարչապետի միակ թեկնածու Նիկոլ Փաշինեան չընտրուեցաւ: ՀՀ վարչապետ:

Յիշեցնենք, որ ընտրուելու համար անհրաժեշտ էր առնուազն 53 ձայն: Մինչ այդ, 10 վայրկեան տեւող ելոյթով հանդէս եկաւ Նիկոլ Փաշինեան եւ ժողովուրդը իրաւիքեց, վարչապետի ընտրութիւն տեղի չունենալու պարագային, Չորեքշաբթի առաւօտեան հաւաքուիլ Հանրապետության իրապարակ:

ԿԱՐԵՆ ԿԱՐՉԱՊԵՏԵԱՆԻ ԱՐՉԱԿԱՆՈՎ

Երեւան, «NewsTime».- Չորեքշաբթի, 2 Մայիսին, ՀՀ վարչապետի պաշտօնակատար Կարեն Կարապետեան հանդէս եկած է հետեւեալ յայտարարութեամբ.

Յարգելի՛ քաղաքացիներ, Ելնելով այսօր մեր երկրում ստեղծուած իրավիճակից, ինչպէս նաեւ խորհրդարանական կառավարման համակարգի առանձնայատկութիւններից՝ դիմում եմ բոլոր քաղաքական ուժերին՝ կամք, վճռականութիւն եւ ճկունութիւն ցուցաբերելու, նստելու մի սեղանի շուրջ:

Բոլորս գիտակցում ենք, որ անհրաժեշտ են քաղաքակիրթ եւ կիրառական արագ լուծումներ՝ քաղաքական ճգնաժամը յաղթահարելու համար, որքան էլ դժուար թուայ այն:



Վարչապետ կարող է ընտրուել միայն խորհրդարանում՝ սահմանադրական ճանապարհով:

Այլ լուծում գոյութիւն չունի՝ ոչ տեսականօրէն, ոչ գործնականօրէն: Կստահ եմ, որ համատեղ ուժերով այս փորձութիւնն էլ մեր երկիրը կը յաղթահարի:

ԱՐՄԵՆ ՌՈՒՍՏԱՄԵԱՆ. «ՍԱ ԴԱՆՆԱԿՅՈՒԹԻՒՆ Է ԵՒ ՈՒՆԻ ԻՐ ԱԻՆՆՈՅԹՆԵՐԸ»

ՀՀԴ Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ, Ազգային ժողովի ՀՀԴ խմբակցության ղեկավար Արմեն Ռուստամեան նախքան ֆրակցիայի անունով ելոյթ ունենալը անդրադարձաւ դաշնակցական պատգամաւոր Աղուան Վարդանեանի ելոյթին:



«Աղուան Վարդանեանի յայտարարութիւնը ՀՀԴ խմբակցության համար անակնկալ էր: Մենք, ի հարկէ, կը յարգենք պատգամաւորին սահմանադրական իրաւունքը, որ ան կրնայ քուէարկել իր խղճով եւ համոզումով, բայց սա Դաշնակցութիւնն է եւ ունի իր անաւորութիւնը: Անոր կատարած քայլը այդ անաւորութիւնն էր: Մենք, քնականաբար, այդ պահուածքին համապատասխան գնահատականը անպայման կու տանք: Մենք որոշած ենք եւ այսօր պիտի քուէարկենք յօգուտ Նիկոլ Փաշինեանի», ըսաւ Արմեն Ռուստամեան:

Ազգային ժողովի ՀՀԴ խմբակցության քարտուղար Աղուան Վարդանեան նախապէս իր ելոյթին ընթացքին յայտարարած էր, որ վարչապետի պաշտօնին Նիկոլ Փաշինեանի ընտրութեան քուէարկութեան պիտի չմասնակցի: Վարդանեան ընդօժան էր, որ կը ներկայացնէ կուսակցութիւն եւ խմբակցութիւն, որ կողմ քուէարկելու որոշում ունի, ուստի պատրաստ է վար առնել լիազօրութիւնը, եթէ կուսակցութիւնը այդպէս պահանջէ:

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԲԱՐԱԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐԳ ԴԱՏԿԵՐԱՅՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինեան դիտել տուաւ, որ իր վարչապետ ընտրուելու պարագային Հայաստան պիտի շարունակէ մնալ Եւրասիական Տնտեսական Միութեան եւ Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան անդամ: Խորհրդարանին մէջ վարչապետի ընտրութեան հարցի քննարկումին ընթացքին Նիկոլ Փաշինեան յայտնեց, որ այդ դիրքորոշումը կը բխի ոչ թէ ինչ-որ անձի ճաշակէն, ոչ թէ անձի մը դիրքորոշումի փոփոխութենէն, այլ «Հայաստանի համաժողովրդական շարժումի տրամաբանութենէն»:



«Մենք ըսած ենք, որ այս շարժումի արդիւնքով իշխանութեան եկած է ժողովուրդը, եւ ժողովուրդը, շարժումի ընթացքին բազմաթիւ փոփոխութիւններ պահանջած է ներքին կեանքի կազմակերպումին, արդարութեան, օրինականութեան, իրաւունքներու պաշտպանութեան, ընկերային ապահովութեան քննադատին մէջ: Ժողովուրդը որեւէ փոփոխութիւն չէ պահանջած ու չի պահանջեր արտաքին քաղաքականութեան ոլորտէն ներս: Մենք պարտաւոր ենք հաշիւի նստիլ ժողովուրդի այս ուղերձին հետ», ըսաւ Փաշինեան:

Ան աւելցուց, որ Ռուսաստանը կը համարուի ռազմավարական դաշնակից, իսկ համաժողովրդական շարժումը հայ-ռուսական յարաբերութիւններու համար որեւէ սպառնալիք չի ստեղծեր: «Մենք առանձնայատուկ կարեւորութիւն կու տանք Հայաստան-Իրան եւ Հայաստան-Վրաստան յարաբերութիւններուն: Որեւէ կասկած չկայ, որ քաղաքական այս գործընթացը նոր շունչ ու ներուժ պիտի տայ մեր դրացիներուն հետ յարաբերութիւններուն: Մենք պիտի խորացնենք յարաբերութիւնները Եւրոպական Միութեան հետ եւ այդ կառոյցի անդամ երկիրներուն հետ: Մենք ամէն ինչ պիտի ընենք Հայաստանի քաղաքացիներուն համար Եւրոպական Միութեան մուտքի արտօնագրի պահանջի վերացումին ուղղութեամբ», յայտնեց Նիկոլ Փաշինեան:

Փաշինեան անդրադարձաւ նաեւ Միացեալ Նահանգներու հետ յարաբերութիւններուն՝ շեշտելով, որ ԱՄՆ-ի հետ բարեկամական յարաբերութիւնները նոր խթանումի կարիք ունին: «Մենք նպատակադրուած ենք յըստակ՝ գործնական քայլեր ձեռնարկել Միացեալ Նահանգներու հետ տարբեր ոլորտներու մէջ փոխգործակցութեան զարկ տալու համար: «Պիտի խորացնենք համագործակցութիւնը Հինաստանի հետ եւ արտաքին քաղաքականութեան այս ուղղութիւնը կը համարենք շատ կարեւոր: Մեծ կարեւորութիւն կու տանք աշխարհի տեղի ունենալիք Ֆրանսախոս երկիրներու Վեհաժողովին, որ անկասկած կը կազմակերպուի բարձր մակարդակով: Հայաստան ամբողջովին պատրաստ է ստանձնելու միջազգային այս հեղինակաւոր կազմակերպութեան նախագահութիւնը», ընդօժանեց ան:

Նիկոլ Փաշինեան շեշտեց, որ հաւատարիմ են Հայոց Տեղասպանութեան միջազգային ճանաչումի եւ դատապարտումի գործընթացին, որովհետեւ համոզուած են, որ միայն դատապարտումի միջոցով կարելի է կանխել նման ոճիւրներու կրկնութիւնը: Անոր գնահատումով՝ դարաբաղեան հիմնախնդիր խաղաղ, միջազգային իրաւունքի վրայ հիմնուած լուծման գործընթացին կարծաւորութեամբ իրենց համար պարտադիր չեն, Արցախի ժողովուրդին համար կենսական է՝ իր ճակատագիրը ինքնուրոյն որոշելու անքակտելի իրաւունքը եւ անոր միջազգային ճանաչումը:

ԱՐՄԵՆ ՌՈՒՍԱՍԵԱՆ. «ՊԵՏՔ Ե ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԽԱՂԱԴ ՅԱՆԳՈՒՑԱԼՈՒԾՄԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ»

ՀԱՅԱՍՏԱՆ. ՄԱՅԻՄ 1-ԷՆ ՄՈՒՋ ԵՒ ԵՏՔ



U. Sahakyan

1 Մայիսին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յատուկ նիստին, ուր կը քննարկուեր ՀՀ վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինեանի ընտրութեան հարցը, ՀՀ խմբակցութեան անունով ելոյթ ունեցաւ ՀՀ խմբակցութեան ղեկավար Արմեն Ռուսասեան:

«Մեր դիրքորոշումին նպատակը յստակ է՝ հասնիլ այնպիսի հանգուցալուծման, որմէ կը շահի մեր ողջ ժողովուրդը Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ: Մեր ժողովուրդի եւ քաղաքական ուժերու հասունութեան եւ իմաստութեան փորձութիւնն է սա:»

«Տակաւին Սերժ Սարգսեանի ընտրութեան ատեն յայտնած էինք մեր մտահոգութիւնները ու պնդած որ պարտաւոր ենք ապացուցել, թէ այս նոր կառավարման համակարգով երկրէն ներս բան մը պիտի փոխուի, որ արատաւոր բարքերը փոխելու համար անհրաժեշտ է նախ եւ առաջ փոխել կարգերը ու օր առաջ հաստատել նոր կարգեր:»

«Այո՛, կը պնդեմք, որ հինէն օր առաջ ազատուելու համար, երկրէն ներս նոր կարգեր պետք է հաստատուին: Կը յիշեցնեմք, նաեւ որ Աստուածաշունչը կը զգուշացնէ նոր գինին հին տակառներու մէջ չլեցնել, որովհետեւ նոր գինին կը պատռէ հին տակառը: Այդպէս ալ եղաւ, բայց, ինչպէս կ'ըսեն, Շաբաթը Ուրբաթէն շուտ եկաւ: Հիմա ունինք նոր, ֆորս մաժորային իրավիճակ, որ անյայտաբար լուծումներ կը պահանջէ:»

«Սերժ Սարգսեան իր հրաժարականով ատոր համար դուռ բացաւ եւ ապացուցեց, որ վարչապետի պաշտօնի ստանձնումը ներքին հատուածական շահ չէր հետապնդող, հիմա Հանրապետականի կարգն է ապացուցել, որ ներկուսակցական շահ չի հետապնդող եւ պատրաստ է երթալ խաղաղ հանգուցալուծման ճամբով:»

«Այս պահուն, շարժումի առաջին փուլը, գոր կարելի է բնորոշել որպէս ինքզինք սպառած հինը մերժելու փուլ, որոշակի ամումով կատարուած է: Հիմա սկսած է ամենադժուարինը՝ արարումի փուլը՝ այդ մերժումի առանցքը կազմած պատճառներու վերացումի փուլը:»

«Մենք պարտաւոր ենք, անցեալի սխալները չկրկնելով, թոյլ չտալ, որ համաժողովրդական զարթոնքի ներուժը մահուի, ժողովուրդը հիասթափուի, այլ ամենքը, իւրաքանչիւր քաղաքացի զգայ ժողովրդային շարժումին բերած նոր շունչը եւ ճաշակէ անոր բարերար արդիւնքները:»

«Այս արարումի փուլը յաջողակութեամբ գրաւականը նախ եւ առաջ արտաքին ուժերու միջամտութիւնը բացառելն է, Հայաստանի եւ Արցախի անվտանգութիւնը պահպանելը, հասարակութիւնը չբաժնելը եւ ներազգային համերաշխութեան ու

բոլոր կողմերու համախոհութեան վրայ հիմնուած միասնաբար առաջ ընթանալն է: Սա պետք է ըլլայ յաղթանակ, որուն մէջ իրենց դերակատարութիւնը կը բերեն բոլորը՝ անկախ քաղաքական հայացքներէ:»

«Մենք Նիկոլ Փաշինեանի հետ խօսած եւ համաձայնած ենք այս



փուլին հետ կապուած սկզբունքային եւ առաջնահերթ նշանակութիւն ունեցող շարք մը կարելորագոյն հարցերու մասին, որոնցմէ ես յատկապէս կ'ուզեմ առանձնացնել հետեւեալները:»

«Պետք է իրականացնել խաղաղ հանգուցալուծման ներքաղաքական այնպիսի գործընթաց, որ չի վտանգեր մեր դիրքերն ու պաշտպանութիւնները դարաբար հասնելու ճակատի վրայ:»

«Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորում այն սկզբունքներով, որոնց առանցքը կը մնայ Արցախի ժողովուրդի հանրաքուէով իսկ արտայայտուած կամքը:»

«Ընտրական համակարգի բարեփոխում տարածքային վարկանշային ընտրակարգի վերացումով: Խորհրդարանական կառավարման համակարգի հետագայ զարգացում իշխանութեան լիարժեք ապակեղոնացումով: Համազգային շահերէն բխող հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորում եւ Հայոց Յեղասպանութեան ճանաչումի հետեւողական գործընթաց:»

«ԵՄ, ԵՏՄ եւ ՀԱԿԿԿ շրջանակներէն ներս գործընկերային յարաբերութիւններու շարունակում:»

«Սիրելի՛ հայրենակիցներ, ոչ ոք դժմ կրնայ ըլլալ ժողովուրդի իշխանութիւնը հաստատելու նպատակին: Բայց դա խաղաղ եւ անցնում կատարելը կը պահանջէ, որ այդ գործընթացը իրականացուի մտածուած՝ բոլոր կողմերու ընդգրկումով եւ համախոհութեամբ:»

«Սա պետք է ըլլայ բոլորիս սըրբազան պարտքը, որ ի լուր աշխարհին կ'ազդարարէ մեր համազգային իմաստութեան եւ հետապնդութեան մասին, անխուսափելիօրէն կը բարձրացնէ Հայաստանի եւ հայութեան միջազգային հեղինակութիւնը: Մենք ունինք բացառիկ կարելիութիւն չհակադրելու ժողովրդավարութիւնն ու անվտանգութիւնը, այլ ճիշդ հակառակը՝ ամրապնդելու թէ՛ մէկը, թէ՛ միւսը: Սա է այն նոր սկիզբը, որ մեզ կը տանի դէպի մեր երագած արդար Հայաստանը: Իմաստութիւն բոլորիս»:»

Վերջին մօտաւորապէս մէկ ամսուան ժամանակամիջոցին, Հայաստան բեմ դարձաւ ժողովրդային եւ քաղաքական հագուադէպ զարգացումներու, որոնք ափ ի բերան ձգեցին հայկական աշխարհը: Հայաստանի մէջ թէ Սփիւռքի տարածքին, մատուցանք հեռասպառնութիւն պատճառող զարգացումներու, որոնք ժամ ժամ նորութիւններ բեմ հանեցին: Մեզի հետ, դէպքերուն հետեւող աշխարհն ալ զարմանք արձանագրեց ի տես շա՛տ բաներու, ինչպէս՝ ժողովրդային պոռթկումի խաղաղ արտայայտութեան, անկարելի կարծուող յեղափոխութեան, մասնաւորաբար երիտասարդներու մասնակցութեամբ ծաւալ ստացած շարժումի մը, որ յեղաշրջեց մեր հայրենիքին իրավիճակը՝ բազմաթիւ ոլորտներու մէջ, ու տակաւին կը մնայ յոյ բարեշրջում խոստացող եղելութիւններով:»

Նպատակ չունիք արձանագրելու ժամանակագրութիւնը այն դէպքերուն ու քայլերուն, որոնք վառեցին այս շարժումին պատռոյզը: Կը բաւէ միայն արձանագրել, որ ժողովրդային խաղաղ ըմբոստութիւնը բեւեռուեցաւ «Ելք» դաշինքի անդամ եւ քաղաքային Պայմանագրութեան կուսակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանի շուրջ, սկզբնապէս դըրսեւորուեցաւ իբրեւ նախկին նախագահ, ապա, նոր դրութեամբ վարչապետ ընտրուած Սերժ Սարգսեանի դէմ ընդվզումի արտայայտութիւն: Այլեքին բարձրացման հետ, հետզհետէ բացայայտ դարձաւ, որ ուրուագծուող տագնապը, Փաշինեան-Սարգսեան անձնական հակադրութենէ աւելի՝ Հայաստանի քաղաքական-ընկերային առկայ դրութեան դժմ շարժում մըն է: Դէպքերու զարգացումը ստացաւ այնպիսի արագ թափ, որ ստեղծեց յարափոփոխ վիճակ, դուռ լայն բանալով տեղի ու անտեղի, արդար ու անհիմա մեկնաբանութիւններու ստեղծուեցաւ վիճակ, երբ առաւօտուն ներկայացուած կեցուածք մը կամ մեկնաբանութիւն մը գլխիվայր շրջեցաւ քանի մը ժամ կամ օր մը տեղ: Այլեքը որոշ գագաթնակէտի մը հասաւ Ապրիլ 24-ի նախօրեակին, նախ՝ Փաշինեան-Սարգսեան կարճատեւ հանդիպումով, երբ օրուան վարչապետը մերժեց ընդամաք երթալ մրցակիցին հրաժարական տալու պահանջին, յայտարարելով, որ անոր հետ բանակցելու գետին չի տեսներ, սակայն յաջորդ օրը, ստիպուեցաւ յայտարարելու իր հրաժարականը եւ խոստովանելու՝ թէ «Փաշինեան ճիշդ էր»: Սերժ Սարգսեանի հրաժարականը արդարօրէն ընկալուեցաւ իբրեւ ժողովուրդին արձանագր-

րած առաջին մեծ յաղթանակը եւ նոր թափ տուաւ «թաւշային յեղափոխութեան»: Մինչեւ այսօր ալ, այդ քայլին մասին կայ երկու հակոտնեայ մեկնաբանութիւն: Մէկը կ'ըսէ, թէ Սարգսեան քաղաքական անձնասպանութիւն գործեց, իսկ երկրորդը կ'ըսէ, թէ ան քայլ մը ետ առած է ու վերջին խօսքը չէ ըսած, հակառակ անոր, որ իրականութիւնը յստակ է: Յաջորդ գագաթնակէտերը կազմեցին փոխվարչապետ Կարէն Կարապետեանը իբրեւ Սարգսեանի գործը շարունակող վարչապետ առաջադրանքին մերժումն ու նոր վարչապետի ընտրութեան համար 1 Մայիսին խորհրդարանի նիստ մը գումարելու որոշումը, Փաշինեան ներկայացաւ իբրեւ միակ թեկնածու:»

Քանի մը օրուան մէջ, Հայաստանի քաղաքական բեմին խճանդկարը փոփոխութեան ենթարկուեցաւ, նախատեսել տալով վերիվայ-



րումներ՝ նաեւ կուսակցական մակարդակներու վրայ: Իշխանական Հանրապետական կուսակցութիւնը մնաց առանձին, Փաշինեանի թեկնածութեան յարեցան մնացեալ բոլոր ազդու՝ մեծ ու փոքր ուժերը: 1 Մայիսի նիստին, Հանրապետական պլոքը, վստահելով ձայներու իր առաւելութեան, խափանեց Փաշինեանի վարչապետ ընտրութիւնը, իսկ միակ թեկնածուն՝ «ժողովուրդի թեկնածուն» անդրդուելի մնաց քայլ մը իսկ չնահանջելու իր որոշումին վրայ: «Գորդեան հանգոյց» ը մատուցեցաւ անքակտելի վիճակի, դուռ լայն բանալով լուծումի նոր փորձերու առջեւ, յիշեցնելով յունական դիցաբանութեան մէջ ծանօթ՝ «Փանտորայի տուփ»-ի պատմութիւնը: Ի՞նչ, տուփին յատակը մնացած էր Յոյսը...»

Յառաջիկայ օրերուն ու հաւանականութիւններուն մասին խօսելէ առաջ, կ'արժէ անդրադառնալ քանի մը իրականութիւններու, որոնք կը կազմեն համայնապատկերին ընդհանուր գիծերը, կը բացատրեն շարժումին շարժառիթները: Երեւանի ու այլ քաղաքներու փողոցները ողողած ցոյցերը հիւստիստիկ **Суп.՝ 19 5**

Սկիզբ՝ էջ 4

Նախօրեն ունեին խաղաղ բնոյթ, մինչեւ այսօր ալ կը պահպանեն այդ նկարագիրը. ոչ ոք նկատեց, որ իշխանաւորները չդիմեցին հակացոյցեր կազմակերպելու փորձութեան, ինչպէս յաճախ կը պատահի այլ երկիրներու մէջ ու դուռ կը բանայ արիւնահեղութեան, իսկ մանր միջադէպերը հետք ձգող ազդեցութիւն պիտի չունենան: Փաշինեանի հետեւորդները բացարձակ մեծամասնութեամբ երիտասարդներ են, համալըսարանականներ, որոնք վերջին երկու տարուան ընթացքին լաստ մը կը սեպեն Փաշինեանը: 1 Մայիսին, ցուցարարներու առաջին շարքերուն երեւցան մեծ թիւով տարեցներ:

Փաստօրէն, թէ՛ 1 Մայիսի նիստը եւ թէ՛ զայն կանխող հրապարակումները՝ իրարու հակադիր ճակատներ են, սեւի վրայ ճերմակով (նաեւ տեսալսողական միջոցներով) հաստատեցին, որ Հայաստան ներքին ճակատներու վրայ մատնուած է տագնապալի վիճակի: Աղաղակող կերպով եւ առանց կաշկանդումներու վկայութիւններ տրուեցան տարիներէ ի վեր բոլորին ծանօթ այն իրականութեան մասին, որ իշխանաւորներն ու անոնց ետին կանգնողները ժողովուրդը մատնած են ընկերային դաժան վիճակի, տնտեսական բարելաւումի մասին հաւաստիքները բոլորովին չեն համապատասխաներ իրականութեան, հետեւանքներն մէկը, ու ամենէն վնասաբերը՝ զանգուածային արտագաղթն է դեպի ապրուստի աւելի լաւ պայմաններ խոստացող երկիրներ՝ մօտ ու հեռու, մասնաւորաբար երիտասարդ եւ ուսեալ սերունդը կլանող, որովհետեւ Հայաստանի մէջ անոնց համար ապագան մատնուած է մթութեան:

Այս ալիքին վրայ նաւարկող Փաշինեանը յաջողութեամբ յառաջ տարաւ շարժումը, ինքզինք վերածելով դժգոհ զանգուածը մագնիսացնող բեւեռի մը, հակադիր բեւեռի դերը ձգելով իշխանաւորներուն, հիմնականին մէջ Հանրապետական Կուսակցութեան: Այլ կարելի էր մըն եր այն, որ «թաւշեայ յեղափոխութիւն» անունով ծաւալած շարժումը, կեդրոնանալով ներքին այս վիճակին վրայ, յայտնապէս չուր չի մեց արտաքին ուժերէ, թէեւ իշխանութեան մօտիկ կանգնողներ ուղղակի եւ անուղղակի ակնարկութիւններ ըրին հաւանական արտաքին զօրակցութեանց, յատկապէս դիտել տալով, որ նման շարժում մը նիւթական միջոցներու կը կարօտի...: Տակաւին, յստակ դարձաւ, որ տակաւին տարի մը առաջ, հրապարակային նոյն ոճով՝ բարձրախօսը ի ձեռն փողոցներու մէջ քուէ հայցող «Ելք»ի այս ղեկավարը յաջողած է թափանցել ժողովրդային խաւերէ ներս եւ այսօր, Հայաստանի հրապարակները ողողող բազմութիւններ տարուած են անոր հմայքով, հոգ չէ թէ այս բոլորին մէջ տեսնուի զգացականութեան ու խտելականութեան գերակայութիւն: Այլ կուսակցութիւններ մնացած են աւելի

ձեռնածալ, ու բնականաբար հող կորսնցուցած են:

1 Մայիսի նիստի նախօրեակին, Փաշինեանի հետ հանրապետականներու հրապարակային տեսակցութիւնը, որ կոչուած էր բանակցութիւն բանալու՝ ի խնդիր մեծ հարցականներու պատասխաններ որոնելու եւ համախոհութեան դուռը բանալու, ստացաւ մեղադրեալի մը հարցաքննութեան դատարանային նիստի մը ընթացքը: Հանրապետական ներկայացուցիչներ, մասնաւոր խորհրդարանի նախագահը ամբարձրեցին ընտրութեան ներկայացող աշակերտ մը հարցաքննող ուսուցիչի կամ ամբաստանեալ մը մեղադրող փաստաբանի մը ոճով՝ հարցումներու տարափ մը թափեցին Փաշինեանի գլխուն: սակայն ան պատասխանեց լաւ աշակերտի մը պէս, մինչդեռ աւելի քան շաբաթ մը առաջ, Սարգսեանի հետ հանդիպումի՝ եղած էր աւելի կտրուկ: Նման պատկեր ստեղծուեցաւ նաեւ վարչապետի ընտրութեան յատկացուած 1 Մայիսի նիստին, ուր կողմերը բացայայտ դարձուցին, որ առնուազն չեն խօսիր նոյն լեզուով, կը մնան անհաշտ մեղադրողներ, մէկը վստահելով ժողովրդային լայն զօրակցութեան, միւսը՝ ձայներու առաւելութեան ու... արտախորհրդարանական իր լծակներուն: Հոս եւս, մեկնաբանութիւններ ծայր տուին, թէ՛ Հանրապետականները, իրենց նախագահին հետեւողութեամբ, քաղաքական անձնասպանութիւնը կը շարունակեն, կամ՝ չ'անտեսուիր այն հաւանականութիւնը, որ Հանրապետական Կուսակցութիւնը մաշումի ենթարկուի, հակառակ միակամութեան անոր հաւաստիքին՝ դիմափոխութիւն ու վերանախառնում ապրի. սա Հայաստանի քաղաքական կեանքին մէջ անսխալը կամ օտար երեւոյթ չէ: Համայնավարութեան օրերէն ի վեր, կարգ մը դեմքեր ծփացած են այս կամ այն լիճին վրայ, ուրիշներ մատնուած են անշքութեան, անցած են վարագոյրի ետին...

Որպէսզի չվազենք դեպքերէն արագ, նշենք, որ ստեղծուած է հակադարձութեան մը սպասումի վիճակ: Խորհրդարանի նիստին, Փաշինեանը քննադատողներ անգամ մը եւս ուղղակի ու անուղղակի ակնարկութիւններ կատարեցին «երկրի անվտանգութիւնը խաղի դնելու» անոր ընթացքին մասին: Ի դէպ, բոլորն ալ կը խօսին ժողովուրդին ու անոր շահերուն պաշտպանութեան անունով, խաղաղութեան ու ապահովութեան պահպանումին նախանձախնդրութեամբ, Արցախի ու Հայաստանի սահմանները ամուր պահելու կամքով, հարցերը սահմանադրական միջոցներով լուծելու տրամադրութեամբ, ընկերային-տրնտեսական տագնապը դարմանելու խոստումներով: Կու գայ պահ մը, որ ժողովուրդին միտքին մէջ հարց կը ծագի, թէ ի վերջոյ, ո՞վ է իր իրական պաշտպանը, իր անունով խօսողը. հարց չի տրուիր, թէ «ժողովուրդին պաշտպան» իշխանաւորները ինչո՞ւ տարիներէ ի վեր անտարբեր մնացած են աղաղակող դառնութեանց դիմաց ու այսօր,

յանկարծ դարձած են ժողովուրդի կարիքներուն ընդառաջողներ (ընդդիմադիրներ բոլորովին չեն դժեր կարգ մը իրագործումներ, սակայն զանոնք արդարօրէն կը դիտեն իշխանութեան մը կողմէ նուազագոյն պարտականութիւնները կատարողի տեսանկիւնէն):

Այսօր, խորհրդարանի նիստէն ետք, տիրապետող հարցումը կը մնայ հետեւեալը. յառաջիկայ օրերու խորհրդակցութիւններն ու բանակցութիւնները պիտի յաջողի՞ն ելք մը գտնել թնճուկային վիճակէն: Նախագահ Արմէն Սարգսեանի այն ակնարկութիւնը, թէ հարցերը պետք չէ փողոցներու մէջ լուծել, արդէն մնացած է անարձագանգ:

Ինչ որ արձանագրեցինք վերի սիւնակներուն մէջ, ընդհանուր գիծերն էին այն համայնապատկերին, որուն կը հետեւինք ժամը ժամու, կամ հպանցիկ կերպով կը դիտենք՝ կը կարդանք հոս կամ հոն:

Յիշեալ գարգացումները, ինչպէս ըսինք, հեւասպառ վիճակի մատնած են թէ՛ ցուցարարները, եւ թէ՛ գարգացումներու հետեւողները՝ բոլոր ճակատներուն վրայ: Ըստ բաւականին լայն քննարկում տեղի չ'ունենար այն ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ 2018, որոնք ուրուագծուած են Փաշինեանի քաղաքական յայտարարութեանց ու անոր դիմաց իշխանաւորներուն տուած պատասխաններուն ու հակադարձութիւններուն մէջ:

Արձանագրենք անոնցմէ մէկ քանիս:

Ինչ որ ալ ըլլան յառաջիկայ օրերու գարգացումները, մինչեւ իսկ եթէ կարելի ըլլայ հասնիլ հոն, ուր, ըսենք՝ իբրեւ առժամեայ լուծում, համախոհութիւն գոյանայ Փաշինեանի վարչապետ ընտրութեան շուրջ, անկէ ետք՝ ի՞նչ: Այսինքն, հանրապետականները պիտի ընդունին ձեռքը հանել այն միջոցները, որոնք անոնց ու իրենց կողքին կանգնող «աներեւոյթ խաւ»ին ապահոված են նիւթական եւ ուժական միջոցներ: Կարելի պիտի ըլլա՞յ երաշխաւորել խորհրդարանական այնպիսի ընտրութիւններ, որոնք ըլլան իշխանութեան ընդդիմադիրներուն պատկերացումին չափ արդար, ունենալու համար շատ աւելի ներկայացուցչական դիմագիծով ազգային ժողով մը: Բացայայտ գաղտնիք է, որ որոշ խմբակ մը, արտաքին տնտեսական ուժերու եւ խըմբաւորումներու հետ գործադրաբար, մենաշնորհներու վիճակ ստեղծած է երկրին մէջ: Յաջող կառավարութիւնը պիտի կրնա՞յ... պետականացնել տնտեսութեան այնպիսի միջոցներ ու հիմնարկներ, որոնք տասնամեակներէ ի վեր շահ կը հոսեցնեն փոքրամասնութեան մը զանձանակներուն մէջ, երբեմն փշրանքներ հասցնելով յիշեալ խաւին ապահովող-յենարաններուն: (Պետականացում բառը հաւանաբար յօնքեր վեր պիտի հանէ. նման քննարկումներ ժամանակակից աշխարհին մէջ, չեն համապատասխաներ տնտեսական արդի դրութեան, սխալ կիրարկումներ մաշեցուցած են անոր օգ-

տակարութիւնը):

Անկէ կը ծագի այլ հարց մը. ինչպէ՞ս կ'ըլլայ, որ Հայաստանի մէջ փոքրամասնութիւն մը «աշխատանքի ճամբաներով» կրնայ հարստութեան ու բարօրութեան հասնիլ, մինչդեռ զանգուածը կը տուայտի աղքատութեան սահմաններուն մէջ ու կը ստիպուի արտագաղթել: Յեղաշրջումը յառաջ տանելու եւ նոր յաջողութեան հասցնելու պարագային, ո՞վ հաշիւ պիտի պահանջէ պաշտօն չարաշահողներէն, հարստութիւն կուտակող եւ երկրէն դուրս փախցնողներէն (դեռ քան մը ամիս առաջ խոստովանութիւն մը հրապարակուեցաւ, որ «օձորային» գործառնութիւնները պիտի զըսպուին, յաջողօրերուն ու շաբաթներուն ոչինչ ըսուեցաւ կիրարկումին մասին): Յետոյ, ինչո՞ւ հայկական դրամագլուխն ու ներդրումները պիտի չըլլան գերակշռողը, այլ առաւելաբար պիտի դիմուի արտաքին ներդրումներու ընտրանքին, անոնք ալ ներկայացուին իբրեւ մեծ իրագործումներ, մինչդեռ ամենէն պարզ տրամաբանութիւնն իսկ կը յուշէ, որ տեղ մը ներդրում ընող օտարակալը՝ անհատ կամ ընտրութիւն-շահակցական հիմնադրամ, այդ քայլին կը դիմէ ՇԱՀ ԱՊՈՒՎԵՆԻՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, եւ ո՞չ թէ տուեալ երկրին ժողովուրդին սեւ աջքերուն համար, ու շահ կ'ապահովէ՛, արտահոսքի մատնելով երկրին եկամուտի կարելիութիւնները, փշրանքներ ձգելով գիւղն ու սահմանային շրջանները գարգացնելու ծրագիրներուն:

Նոր ընտրութիւններու պատրաստուելու փուլը կերտելու համար, սահմանադրական փոփոխութիւններու, նախագահականէ խորհրդարանական անցած ըլլալու վիճակը արդէս դուրս պիտի բանա՞յ խօսքի նոր աճուողի. փաստօրէն, նոր դրութեամբ իշխանութեան ձեւաւորման հազիւ սկսած՝ արդէն իսկ կը խօսուի այս դրութեան «սահաւոր թերութիւններուն» ու «կիսանախագահական դրութիւն» որդեգրելու կամ այլ ընտրանքներու մասին: Կարծեք թէ օրէնքն ու սահմանադրութիւնը ըլլային բուն յանցաւորը, զայն սխալ կիրարկողը, չարաշահողը ըլլար անպարտ: (Նոյնը չէ՞ պարագան կրօններուն, որոնց անունով ոճիրներ կը գործուին, որովհետեւ կը կատարուի սխալ կիրարկում...):

Խօսինք աւելի պարզ բառերով. այսօրուան հարցականներն ու տագնապները նորութիւնն չեն. անոնց մասին տարիներէ ի վեր բարձրաձայն հնչած են ահագանգեր, վերջինը՝ իշխանական նոր դրութեան որդեգրման օրերուն, շեշտելով, որ խոստումները կրնան բարի եւ յուսատու ըլլալ, սակայն աւելի կարեւորը՝ տագնապին արմատներուն սրբագործումն է: Անտեսումը, մասնակի շահերու հետամտութիւնը, փտածութեան խորացումը եւ իսկական բարեփոխութեան ու շարժումը ճամբայ բացին այժմու պոռթկումին:

Վերադառնալով անմիջակա-
Շար.՝ էջ 14 ➤

Սուրի Պատմական ճոզան Այտելուհիներու Ընթացքին. «1915-ին Հայ Եւ Ասորի Ժողովուրդները Այստեղ Մեծ Աւեր Տեսան» Կ'ըսէ Փայլան

Թուրքիոյ քրտամետ ժողովուրդներու ժողովրդավարական Կուսակցութեան հայ երեսփոխան Կարո Փայլան այցելած է Տիգրանակերտ նահանգի Սուր շրջան, ուր քիւրտ-թրքական բախումներու պատճառով աւերներ գործուած են:

Փայլան թուրքերէն իր եջին վրայ գրած է, որ կոչ ուղղած է միասնաբար ձեռնարկելու Սուրի վերականգնումին եւ յայտնած, որ այդ աւերումը դաւաճանութիւն է մարդկութեան ու համաշխարհային քաղաքակրթութեան դէմ:



«Սուրը 100 տարի առաջ այլ նման աւեր տեսած է: 1915-ին հայ ժողովուրդը, ասորի ժողովուրդը այստեղ մեծ աւեր տեսան ու բռնի գաղթեցին, իսկ հիմա՝ մէկ դար ետք, նոյն վայրին մէջ Նոր հայեր կը կատարուի», ըսած է Փայլան՝ նշելով, որ պէտք է վայրկեան առաջ Սուրը դարձեալ ոտքի կանգնեցնել:

ԿԻԼ Թուրքիոյ Նահապաճուհիներու Պագսօսին Իր Թեմնաճորհիւրը ՊԻՏԻ Գոմարտը

ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ Թուրքիոյ Նախկին Նախագահ Ապտուլլա Կիլ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարած է, որ պիտի չառաջադրէ իր թեկնածութիւնը 24 Յունիսին Նախատեսուած Նախագահական արտակարգ ընտրութեան:



«Նախագահութեանը ետք ես գործակալութեան չեմ եղած քաղաքականութեան մէջ: Ոչ ես, ոչ ընտանիքս աստիկա կը փափաքինք: Առաջադրումիս հետ կապուած որեւէ գործողութիւն չի կատարուիր», ըսած է ան:

Կիլ յիշեցուցած է, որ Նախագահ չէր բացառել ընտրութիւններուն իր մասնակցութիւնը, եւ «պիտի չխուսափի իր պարտականութեան կատարումէն, եթէ լայն համաձայնութիւն ըլլայ» իր թեկնածութեան շուրջ:

Շարք մը թուրք վերլուծաբաններու կարծիքով՝ իբրեւ ընդդիմութեան միասնական թեկնածու առաջադրուելու պարագային Կիլ կրնար զգալի համեմատութեամբ քուէ ապահովել:

Աւելցնենք, որ Թուրքիոյ վարչապետ Պիլալի Երլտըրը մէկ օր առաջ յայտարարած էր, որ թրքական ընդդիմութեան՝ Նախկին Նախագահ Ապտուլլա Կիլ երկրի Նախագահի պաշտօնին համար իբրեւ միացեալ թեկնածու առաջադրելու փորձերը տապալած են:

Նախագահ թրքական լրատուամիջոցները կը պնդեն, որ Կիլ կրնայ դառնալ ընդդիմութեան միասնական թեկնածուն: Ան այդ պաշտօնը վարած է 2007-էն 2014:

Երկրի գլխաւոր ընդդիմադիր Զանրապետական Ժողովուրդի Կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Եօզկիւր Եօզէլ յայտարարած էր, որ կուսակցութիւնը Կիլը չի նկատել Նախագահական ընտրութեան իր թեկնածուն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրուի Տիգրանակերտի Զայրենակցական Միութեան «Տիգրանակերտ» եւ «Շուշի» շէնքերու վարձուորներէն, որոնք ցարդ չեն փակած իրենց 2017-ի յետնեալ վարձքերը փութան վճարելու զանոնք մինչեւ՝ 30-6-2018-ը այլապէս միութիւնս պիտի դիմէ պետական միջոցներու զանձելու համար վերոյիշեալ վարձքերը:

Այլ տեղեկութիւններու համար հեռաձայնել. - 2110088 - քշի-ջային 0944 250808:

Տիգրանակերտի Զայրենակցական Միութեան Վարչութիւն

«ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ»՝ ԶԱԼԵՊԻ, ԼԱԹԱՔԻՈՅ ԵՒ ԲԵՏԱՎՊԻ ՄԵԶ

Զամազգայինի հիմնադրման 90-ամեակի ծիրէն ներս, Զամազգայինի «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի Երաժշտական Յանձնախումբը հայ երգն ու երաժշտութիւնը վառ պահելու եւ երիտասարդ սերունդը գուսանական արուեստին ծանօթացնելու միտումով կազմակերպեց «Գուսանական Երեկոյ» մը, որուն ընթացքին ներկայացուցան հայ գուսանական՝ աշուղական երգերէն պատահիկներ:

Ուրբաթ, 13 Ապրիլ 2018 Լաթաքիա
Կազմակերպութեամբ Զամազգայինի «Վահան Նաւասարդեան» Մասնաճիւղին, Ուրբաթ, 13 Ապրիլին, Լաթաքիոյ «Արարատ» սրահէն ներս երեկոյեան ժամը 18:00-ին, տեղի ունեցաւ «Գուսանական Երեկոյ»-ն: Ներկայ էին՝ Լաթաքիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդը, հայկական միութիւններու ներկայացուցիչներ եւ



3 Մարտ 2018-ին, Զալեպի «Նոր Սպիտակ» ճաշարանէն ներս, մտերմիկ մթնոլորտի մը մէջ, համեղ ընթրիքի սեղաններուն շուրջ, ներկաները վայելեցին գուսանական երգեր: Օրուան բացման խօս-

աւելի քան 200 երաժշտասեր լաթաքիահայեր:
Բացման խօսք արտասանեց Նայիրի Կարապետեան. ան ողջունեց ներկաները, բարի գալուստ մաղթեց Զալեպէն ժամանած




քը արտասանեց Մեղրի Պաղտիկեան, ապա բեմ հրաւիրուեցան երաժիշտներն ու մեներգողները, որոնք ներկաներուն հրաճուցին գուսանական երգերու գեղեցիկ փունջ մը: Սոյն ելոյթին իրենց մասնակցութիւնը բերին մեներգողներ՝ Աշոտ Թեմիրճեան, Մարիա Չիչեան եւ Կասիա Պաղտիկեան եւ «Նոր Սպիտակ» խումբի երգիչ Կարո Պերեճիլեան:

«Ն. Աղբալեան» Մասնաճիւղի Վարչութեան ներկայացուցիչներուն եւ իրենց սիրայօժար մասնակցութիւնը բերող երաժիշտներուն ու մեներգողներուն:

Եօթը ժամ տեւող երկարատեւ եւ սպառիչ ճամբորդութենէն հասած երաժիշտներն ու մեներգողները, մոռնալով ճամբու յոգնութիւնը, ներկայացուցին իրենց լաւագոյնը՝ ոգեւորելով ներկաները: Ելոյթի աւարտին իր սրտի խօսքը յղեց Արթ. Տեր Մաշտոց Զիւլ. Արապաբլեան: Ան գնահատեց ելոյթի կազմակերպիչները՝ շեշտելով, որ Նոր սերունդը պէտք է պահպանէ ու զարգացնէ մշակութային մեր ժառանգութիւնը:

Շաբաթ, 14 Ապրիլ 2018 Բեսապ
Զամազգայինի Բեսապի «Յ. Օհանջանեան» Մասնաճիւղին կազմակերպութեամբ, Զալեպի **Զամազգայինի «Ն. Աղբալեան» Մանկ. - Ի Մամուլի Յանձնախումբ** Շաբ.՝ 12 12

Քաղաքականության և Կրթության Կրթական



Յուշիկ Նազարեան

Եղեր հայ յիմար մը Զանատա մայթին վրայ ելեր է ինքնաշարժով ու 10 մարդ սպաներ է... Կը յիշէ՞ք երբ մէկ տարի առաջ, Երեւանի մէջ ուրիշ յիմար մը հանրակառք մը պայթեցուցեր էր: Յետոյ մէջտեղ ելաւ, որ գոքանչին հետ կրուեր է եւ անոր տունը պայթեցնելու կ'երթար, երբ ումբը հանրակառքին մէջ պայթեր է...

Տարիներու երկար քննութենէ ետք, հանգիստ խիղճով կրնամ յայտարարել, որ հայութիւնը միայն երկու գերխնդիր ունի, մէկը գոքանչը՝ միւսն ալ քեպապան է: Զա՛, յիշեցի, վերջերս ալ Սերժ-մերժ ըսելով բաներ մը եղաւ... Ուրեմն, կարելի է եզրակացնել, թէ Զանատայի յիմարը կա՛մ քեպապի, կա՛մ գոքանչի խընդիր ըլլալու է, ուրիշ ո՛չ մէկ բան այդքան կը յուզէ հայերը: Զապա հրապարակ իջնողները: Կ'ընդունիմ, որ ատեն մը շուարած մնալէ ետք, վերջապէս գտայ քեպապաբոյր այն պատկերը, որ կը հաստատէ իմ պընդումներս (յօդուածին հետ կը ներառեմ պատկերը): Արա, ի՛նչ հաւես պան ա հրաբարակ ցոյցի գնալը (յարգելով ինչիւնային իւրայատկութիւնները):

Յանցարարը Սերժն է մա՛րդ Աստուծոյ, գիտե՛ս որքան ժողովրդականութիւն կը շահէիր, եթէ գոքանչիդ գլխուն փորձանք մը բերէիր: Կամ ալ հրապարակ իջնէիր, լայնքին-երկայնքին քեպապի սեղան մը բանայիր (ընտրութիւններուն ձայն գնելու պէս), նայիս այն կոկորդները որոնցմէ վար պիտի սահէին քեպապները, պիտի կարենային «Սերժիր Սերժին» պոռալ: Արաբները պարապի չեն ըսած. «Բերանը կերակրէ՛, աչքը կը խակնի»: Բերանը, ոչ թէ գրպանը, գրպանէն ալ խըպալող չմնաց: Վկայ Սարքուզին:

Զանի յանցարարներուն մասին կը խօսիմք, եկէք յիշենք նաեւ յաւիտենական յանցարարը՝ Դաշնակցութիւնը: 128 տարուան կազմակերպութիւն, սա պարզ ճշմարտութիւնը չսորվեցա՞ք, դաշնակներ: Որո՞ւ պէտք էր ժողովուրդին եօթը դարու շղթան կոտորել... Որո՞ւ պէտք է գաղափար, ազգային իտեալներ, Սփիւռք, Արցախ, հայապահպանում, հայ դատ-մայ դատ... Աս ամէնը փոր չեն կշտացներ, քեպապ պէտք է, ԶԵ-ՊԱ՛Պ, պա՛պ... Զայուն

փորն ալ փո՛ր է, թէ հոր...

Մէյ մըն ալ, այսինչ կամ այնինչ սփիւռքահայ «մտաւորական»ը Զայաստանի «յեղափոխութեան» մասին կարծիք կը յայտնէ ու ես ինծի կը հարցնեմ «Աս քեպապաբանը ուրկէ՞ ելաւ»: Մարդ ասոր չէ՞ ըսած, թէ քանի մը տեսակ քեպապ չ'ըլլար նոյն շամփուրին վրայ ելիլ: Զոտը զգուշի է, մանաւանդ երբ թարմ լիպերալին մզլոտած համայնակարական հայիոյանքներ կ'աւելցնեն, աչ ու ձախը այնքան կը խառնեն,



որ հետն ալ, չես գիտեր, մարդուս մի՞տքը, թէ սիրտը կը խառնուի... Ե՛հ, Աստուծո՛ւմ՛ գտնես, Մա՛րք Չուքուզըրկ...

Թերթերուն մէջ կը կարդամ. «ԶՅԴ բոլոր կողմերը բանակցութեան սեղանի կը հրաւիրէ» ու մէջէս կը պոռամ, «սխա՛լ»... սխալ սեղան ընտրեր էք... Զայութիւնը միայն մէ՛կ սեղանի շուրջ կրնայ հաւաքուիլ, իսկ մնացածը՝ պառակտում, կռիւներ, վեճեր, ՄԵՆՔ ու ԴՈՒԲ: Փրեցէ՛ք այնպիսի սեղան մը, որ կարենայ ապերախտ փորերուն յիշեցնել, թէ ո՛վ կերտած է նոր ժամանակներու հայոց պետականութիւնը, ո՛վ իր երիտասարդներուն լաւագոյնը ողջակիզած է ազգի բագինին վրայ, ո՛վ դադրեցուց Զայաստան-Թուրքիա վատահամբաւ ստորագրութիւնները, ո՛վ հայուն իրաւունքները կը բարձրացնէ միջազգային բեմերուն վրայ: Փրեցէ՛ք պատուով, հոն ուր պատմութեան մեծ կայսրութիւնները ծունկի եկան, չքացան, իսկ «Դաշնակ Շներ»ը մնացին, ու թող քանի մը օրուան կեանք ունեցող տղուզան ճանճը կրկնէ այդ ժամանակավրէպ հայիոյանքները... Փրեցէ՛ք պատուով սեղանը, որ իր շուքին տակ առնէ ամեն տեսակ քեպապաբանութիւն:

Երեւանի Յոյճերը

Երեւանի Յոյճերը

Չեմ գիտեր թէ ցոյցերն ու յեղաշրջումները յատուկ կարգ ու կանոն կ'ունենան, թէ ոչ: Անոնք որեւէ օրինական չափ ու սահմանի կ'ենթարկուին, թէ ոչ: Ըսել կ'ուզեմ, մարդկային պոռթկումը որեւէ օրէնքի կ'ենթարկուի՛:

Ժողովրդավարական երկիրներու մէջ, ուր արտօսուած է խօսքի ազատութիւնը, ուր մարդիկ իրաւունք ունին ցոյցեր կազմակերպելու, գործադուլ ու դասադուլ կատարելու, իշխանութիւնները որոշ միջոցառումներ ձեռք կ'առնեն, երբ ցուցարարները չափը անցընեն եւ ծայրայեղութիւններու դիմեն, մարդկային, կամ հանրային, թէ սեփական գոյքերուն վնաս հասցնելով, զանոնք զսպելու համար ջուր ու արցունքաբեր կազ կ'օգտագործեն, նոյնիսկ մահակներով ծեծի կը դիմեն:

Այսինքն վերջին տասնօրեակի հայաստանեան ցոյցերուն, ուր ամբողջ ժողովուրդը ոտքի ելաւ եւ մայրաքաղաքի հրապարակն ու պողոտաները լեցուց, իր տեսակին մէջ իւրօրինակ էր, նոյնիսկ օրինակելի, քանի որ այսպիսի յեղաշրջման միտող ժողովրդային պոռթկում ու ցոյցեր շատ հազուադէպ են: Լաւ կ'ըլլայ, եթէ փորձենք ակնարկ մը նետել եղածին վրայ ու նոր միայն գնահատանք տանք:

Ցուցարարներուն ջախջախիչ մեծամասնութիւնը երիտասարդութիւնն էր, ուսանողութիւնը, որոնք երբեմն խառնուած կը տեսնէինք երկրորդական վարժարաններու աշակերտներ, որոնք համար եթէ դասերէն փախչելու առիթ էր, համալսարանականներուն պարագային այդպէս չէր, ուր տարիքի բերմամբ գիտակցութիւնը կը մղէր գիրեց, ոչ թէ արկածախնդրութիւնը:

Ցուցարարներուն մէջ, եթէ սակաւ էր թիւը տարեց մարդոց, տարեց կիներ ընդհանրապէս չկային: Տարեց մարդիկ մայթերուն կանգնած, կամ նստած, արեւածաղիկի սերմեր ջրտացնելով ու կեղեւները գետին թափելով զբաղած էին, միւս իրեց կիները իրեց աշխատավայրերն էին. (Գաղտնիք չէ որ Զայաստանի մէջ աշխատող տարրը գլխաւորաբար կիներն են, իսկ տղամարդիկը ստեղծուած են քիչ աշխատելու, շատ հանգստանալու եւ կիներուն հրահանգներ արձակելու)...

Միւսն ու շատ քիչ երկարող հանրահաւաքներուն, մասնակիցներուն կերածին ու խմածին մնացորդները, հոս-հոն, աղբակուտակ, յորդող աղբամաններուն քով, փոքր բլրակներ կազմած էին, որոնք յաջորդ առաւօտուն կը չքանային... Ոչ հեքիաթային թգուկներն էին մաքրութեամբ զբաղողները, ոչ ալ հաւաքարարներ, երիտասարդ տղաք ու աղջիկներ էին, որոնք շնորհակալ ըլլալը քիչ է, պէտք է անոնց ճակատներէն համբուրել:

Սկզբի օրերուն ցուցարարները ըստ կամի, հոս-հոն փողոցներուն երթեւեկութիւնը կը խանգարէին, մուտքերը խցանելով, մարդոց պոռթկումին կ'ընկերակցէր խժալուր աղմուկ-աղաղակ մը, ինքնաշարժներու շչակներով ու մանկական խաղալիք փողերով: Յաջորդող օրերուն խնդրուեցաւ երթեւեկութեան արգելք չհանդիսանալ եւ դադրեցնել անախորժ աղմուկը, անմիջապէս ենթարկուեցան, բան մը որ իսկապէս անիրագործելի է, երբ բազմահազար ցուցարարներ զսպելը սովորաբար անկարելի կ'ըլլայ: Այստեղ կարելի եղաւ մէկ պատճառով, բոլորը կը սիրէին յեղաշրջման ռահվիրան ու անոր խօսքը գետին ձգել կարելի չէր: Կը սիրէին ղեկավարը, քանի որ կ'ատենին հինը իր բոլոր ստորոգելիներով:

Տայ Աստուած, որ այս հրաբուխը հանգի լուծման եւ շահողը ըլլայ Զայաստանը եւ հայաստանցին:

Յակոբ Միքայէլեան



Յայտարարութիւն

Ուրախութեամբ կը յայտարարենք, թէ Կրթասիրաց Ս. Չեմպերճեան Երկրորդ Վարժարանի Զոգաբարձութիւնն ու Տնօրէնութիւնը կազմակերպած են

ԱՄԱՌՆԱՅԻՆ ԴՊՐՈՑ

որ կ'ընդգրկէ դասաւանդութիւն, պտոյտներ, լողաւազան եւ խաղեր: Տեղի պիտի ունենայ 4 Յունիս 2018-էն մինչեւ 20 Յունիս 2018 առաւօտեան ժամը 9.00-1.30, վարժարանի կառոյցէն ներս, որուն կրնան մասնակցիլ բոլորքէն մինչեւ չորրորդ կարգերու աշակերտները: Մասնակցութեան սակն է՝ 10.000 ս.ոսկի, իսկ՝ փոխադրակառքի սակը՝ 2000 ս.ոսկի:

Յաւելելալ մանրամասնութեան համար դիմել վարժարանի քարտուղարութեան կամ հեռաձայնել հետեւեալ հեռաձայնի թիւին՝ 4646239:

Տնօրէնութիւն

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Էլէյծեան, Նիկողոսեան, Մանճիկեան, Աճեմեան եւ Գարապաշեան ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՀԱՄԵՍՏՈՒՀԻ ԷԼԷՅՃԵԱՆԻ (Ծնեալ՝ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ)

մահուան սուգին: Զանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 6 Մայիս 2018-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Կիլիկներ-Յայէպ: Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալի դուստրին դուկտ. Չեփիւս Աճեմեանի բնակարանէն ներս:

ԻՅՆԱԼ



Պերճուհի Աւետեան

-Ատե՛նն էր իյնալու...

Կարծես իյնալը յատուկ ժամանակ ունի, կարծես քեզ հրող աներեւոյթ սատանան, կամ ոտնատակիդ անակնկալ յայտնուող ու քեզ սահեցնող նիւթը պետք է արտօնութիւն առնէր հարցնելով. -«Կ'ուզե՞ս կամացուկ մը սահիլ, սիրելի՛ս»:

Իյնալդ ալ արժանավայել ըլլար, սակայն բարձր, յիշատակութեան արժանի տեղէ մը...

Իյնալը արժանավայել չէր, բայց օրը պատմական, երկրի վարչապետ ընտրուելուն եւ զանգուածային ցոյ-



ցերուն օրը: Ի՞նչ գործ ունէիր այդպիսի խառն օր մը փողոցները թափառելու:

Անկասկած օրը սովորական չէր: Երկրի բարձրագոյն ատենը՝ խորհրդարանը պիտի կատարէր իր առաքելութիւնը: Վարչապետի պաշտօնին նախատեսուած էր մէկ հատիկ անուն... Այդ կամ ոչ ըսելու ընտրապայքարն էր. տարօրինակ ի՞նչ կայ, «այդ կամ ոչ», իսկ խորհրդարանի անդամներուն համար գլուխը դրական իմաստով շարժելը անելի պատշաճ է: Շատ մը արժանավայել խորհրդարանականներ, աշխարհի շատ մը երկիրներուն մէջ սա անցանկալի «ոչ» ը վերացուցած են իրենց բառապաշարէն, դրական անտեսանելի «աուրա»ով շաղախուած ըլլալը ցանկալի երեւոյթ է:

Երթելէկը աննախատեսելի խանգարուած էր, մարդիկ տեղ հասնելու մարմաջով կը նետուէին պատահական երթուղայիններու մէջ, սեղմուելով կողք-կողքի, գրկախառնուելով, սա արդէն դրական «աուրա»ի ընդհանրացած ու տեսանելի երեւոյթն է աշխատանքի փութալու կամ աւարտի ժամերուն (այս երեւոյթի մասին խորհրդարանը քահիցս արտայայտուած է, սակայն նկատի ունենալով դրականը, երթելութեան միջոցներու բարելաւումը յետաձգուած է հասնելու «աուրա»ի լրիւ հասունութեան էթապի փուլին):

Պատասխանատուութեան զգացումով, ժողովուրդի անբաժանելի մասնիկը ըլլալու գիտակցութեամբ, մտածելով որ կարելի է տեղ հասնիլ, սեղմուեցայ, կծկուեցայ, տեղաւորուեցայ ու երթուղայինը մերթ օրօրուելով, մերթ պլանալով, յաճախ արգելակելով ու բեռնաթափելով հասաւ անկիւնադարձային բաժին... այլեւս ինքնաշարժներու ճամբան փակ էր, իսկ Աստու-

ծոյ պարգեւած գոյգ ոտքերուն համար տակաւին ճամբայ կար... կար նաեւ հետաքրքրութիւն ցուցարարները տեսնելու:

Դէպի կեդրոն հասնելու համար կը հաւատայի որ կարելի է ելք գտնել քալելը մարզանք է, բայց իյնալու մասին ոչ մէկ ցանկութիւն... որ տեղի պիտի ունենար անարժանավայել:

Փորձանքները երկվայրկենային են. «Պիտի իյնաս» փսփսաց մեծ բաւաստեղծը եւ... արդէն մայրի թեք բաժինին վրայ պահ մը անկողին պատկերացնելով կ'երկարիմ. իսկ ինչ լաւ են այս քաղաքի մարդիկ, պատրաստակամ, ծառայասեր, ինքնակոչ տարածուած մայրի վրայ մտածելու առիթ է, երբ տասընեակ պատանի, երիտասարդ, հասուն տարիքի իգական թէ արական սեռի ներկայացուցիչներ կը հակին վրադ... ու հո՛ր, արդէն ոտքի ես, քեզ ոտքի հանած են թելատակերէդ բարձրացնելով, անկում ու արժանավայել բարձրացում:

-Օգնութեան կարիք ունե՞ք:

-Շտապ օգնութիւն կանչե՞նք:

-Ձուր կ'ուզե՞ք:

(Յնկերէն դիպաշարներու մէջ, երբ լուրջ դէպք մը պատահի, դերասանը կամ դերասանուհին կ'առաջարկեն ջուր բերել ու քանի որ հեռատեսիլներու ալիքները ծանրաբեռնուած են այս դիպաշարներով սիրուն աղջիկ մը ջուր կ'առաջարկէ):

Օրը պատմական էր, երկրի վարչապետին շատ հաւանական ընտրութիւնը կ'ընթանար դրական «աուրա»ով, ընդդիմադիրները փայլուն ելոյթներով հանդէս կու գային, նոյնքան փայլուն ու արցունքաբեր դրուատիքներով ելոյթ կ'ունենար խորհրդարանական մեծամասնութիւնը...

Անարժանավայել անկում էր, սակայն արժանավայել ոտքի կանգնած եմ անտեսելով այն դաստակիս ցաւը (այն բազուկս կը բարձրացնեմ, մատներս կը շարժեմ, ամէն ինչ կարգին է) կը շարունակեմ քալել:

Տուցարարներու խումբը խաղաղ ու համբերատար կը սպասէ օրհասական պահուն, ընդհանրապէս երիտասարդներ են ժպտուն դէմքերով (Ինչ լաւ է, որ գոնէ երիտասարդները ժպիտ կը պարգեւեն):

Կը քալեմ ուշադիր, ցա՛ւ... կըրկին ձեռքս կը շարժեմ, պայուսակը այն ձեռքով կարելի չէ վերցնել: Դասած եմ ոստիկաններու պատնէշին, դէմքերը խոժոռ են, կարելի չէ առաջ անցնիլ այդ ուղղութեամբ, հարիւր մէթր անդին, փակ պատերու ետեւ տակաւին լուրջ, «ժողովրդավարական» ընտրութիւն տեղի կ'ունենայ, անելի պարզաբանելով

Շար. էջ 14

ՀՄԸՄ



Գաւառէն նոր Պոլիս հասած ու որբանոց դրուած էի, երբ օր մը, ինչ որ գրութեան մէջ հանդիպեցայ Զայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան սկզբնատառերուն (ՅՄԸՄ): Ինձի համար նորութիւն էին անոնք, ու անոնց իմաստը ինձի բացատրելու համար՝ դիմեցի դասարանին մէջ քովս նստող ընկերոջս.


-Աս «ՅՄԸՄ» ը ի՞նչ կը նշանակէ,-հարցուցի:

-Ատ ալ հարցնելու բա՞ն է... «Յօրդ, մօրդ ըսածը մի՛ ընէր» կը նշանակէ,- պատասխանեց:

-Է՞...


-Ե, մէ չկայ... ՅՄԸՄ՝ Յօրդ, մօրդ ըսածը մի՛ ընէր կը նշանակէ... կրօնատ ձեւն է: Զ(Յօրդ), Մ(մօրդ), Ը(ըսածը), Մ(մի ընէր)...

Չհաւատացի, որովհետեւ տրամաբանութեան հակառակ էր: Մենք նոր էր որ կորսնցուցեր էինք մեր ծնողքը, ու անոնք մեր յիշողութեան ու սրտին մէջ նուիրականացած էին, սրբացած. Անոնց խորհուրդին չհետեւիլը սրբապղծութիւն էր մեզի համար: Յետոյ, նման կազմակերպու-



ներն ու միութեան նշանաբանը. «Բարձրացիր, Բարձրաց ուր» կը կրէր իր վրայ:

Ուրախացանք: Ու եթէ մեր ձեռքէն գար, գիշերն ալ պիտի չհանէինք գանոնք մեր կռնակէն: Նոր հաղորդութիւն ամենողի երկիւղածութիւն մը իջաւ մեր վրայ. Այ սուտ խօսելէ, նախանձելէ ու նման մանր մունր



թիւն ո՞ր յիմարը կրնար յղացած ըլլալ... Դարձայ միւս կողմն նստող ընկերոջս ու անոր հարցուցի:

-Զայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն կը նշանակէ, ըսաւ. այդ չորս բառերուն առաջին տառերով կազմուած է: Կարճ ու կոկիկ է, չէ՞... Ասկէ վերջ, երբ մեկու մը լամբակին վրայ այդ նշանները տեսնես, գիտցի՛ր որ այդ անձը անդամ է այդ միութեան:

Շատ չանցած, մեր որբանոցն ալ կազմակերպելու համար ՅՄԸՄ-ը ներկայացուցիչ մը դրկեց: Ժիրայր անունով երիտասարդ մըն էր այդ ներկայացուցիչը: Կու գար պոյ սկաուտի տարագով, թեւին վրայ իր աստիճանը խորհրդանշող երկու ժապաւենով ու վիզէն կախ սուլիչով մը: Կը հաւաքէր մեզ բակին մէջտեղը գտնուող մայրիկ ծառին տակ ու կազմակերպութեան ծրագրին եւ առաջադրանքներուն մասին տեղեկութիւններ կու տար: Յետոյ, սկսաւ նաեւ մարզանքի եւ ուղիղ քալելու դասեր ալ տալ, քայլ փոխել, հրամանի վրայ այն ու ձախ դառնալ ու նման բաներ ալ սորվեցնել:

Օր մըն ալ, մեր չափերը առին ու համագետ ապսպրեցին: Մինչեւ անոնց գալը երկու շաբաթ անցաւ

մեղքեր գործելէ առաջ կը վարանէինք, այդ ու նման զգացումներ սկաուտին անվայել կը գտնէինք... իսկ մեր պաշտօնական երգումէն վերջ, որ տեղի ունեցաւ բակին մէջ, քահանայ իւր մը, ինստակալներու, ուսուցիչներու եւ ՅՄԸՄ-ի ներկայացուցիչներու ներկայութեան, ու մետաքսեայ եռագոյն դրոշակի մը հովակին տակ տեղի ունեցած հանդիսութեան մը ընթացքին, յանկարծ մեծցանք՝ ու «Ճառայել Զայրենիքին» դարձաւ մեր կեանքի ուղեգիծն ու նշանաբանը:

Ըսեմ նաեւ, թէ մեզմէ շատեր հաւատարիմ մնացին իրենց երդումին՝ մինչեւ հիմա, ու մեռնողները՝ մինչեւ իրենց մահը:

Առոյգ խումբ մը եղաւ մերինը: Զաւաքաբար, տասնեակով մը կամ առանձին կը մասնակցէինք ամէն հանդէսի, ամէն ձեռնարկի, ուր հրակողութեան պէտք կար, եւ ուր հրաւիրուած կ'ըլլայինք առհասարակ: Ազգային թէ միջազգային մրցումներու մէջ մեկէ անելի անգամներ յիշատակութեան էինք արժանացած: Երբ քաղաքէն դուրս արշաւներու երթայինք, երթի կամ դարձի մեր

Արամ Զայկազ Շար. էջ 14

Օրը երկուշաբթի, 23 Ապրիլ 2018: Ահաւոր բան մը այստեղ...:

Կարճ նախադասութիւն մը, որուն մէջ՝ գարիւրանք, սոսկում, տրորում, թրատում Զայ Կաթողիկէ Բերիոյ Թեմին եւ ամբողջ հալէպահայութեան: Զայր եղիշէ Վրդ. ԸԵՆԾԻ վաղ առաւօտեան դէպի Դամասկոս ուղղուած ճանապարհին վրայ, ինքնաշարժի արկածի հետեւանքով հոգին կը յանձնէ իր Արարիչին, սուգի մատնելով թեմի կղերական դասը, հարազատները եւ զինք սիրող հասարակութիւնը:

Սիրելի՛ Վարդապետ, ինչու այդքան արագ կը սուրայիր: Վրտահ ժամադրութեան տեր ըլլալուդ համար էր, որ արագ կը վարէիր ինքնաշարժը, որպէսզի հասնէիր Դամասկոս, ճշդուած ժամուն տեսակցելու Սուրիոյ զբօսաշրջութեան նախարարին հետ:

Սիրելի՛ Վարդապետ, շատ կանուխ մեկնեցար այս աշխարհէն: Ո՞ր թողուցիր ժողովուրդը: Ո՞ր թողուցիր գործակից եղբայրները:

Ո՞ր թողուցիր հայ դասական եւ հոգեւոր երաժշտութիւնը հալէպահայութեան ընծայելու վայելքը:

Ո՞ր թողուցիր երգչախումբը, որուն դիմաց կանգնած թելեր կ'առնէիր, կ'ապրէիր, կը վերանայիր,

Յ. ԵՂԻՇԷ ՎՐԴ. ԸԵՆԾԻ ԶՐԱԺԵՇՏ ՏՈՒՄ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՆ

Կոմիտաս Բիւյ. Տատաղեան

կան անձնաւորութիւններ, մահմետական կրօնաւորներ, Սուրիոյ Խորհրդարանի երեսփոխաններ՝ Ժիրայր Րէսեսեան եւ Փիեր Մըրճէն: Ասոնց կողքին՝ եկեղեցական-ազգային, բարեսիրական, մշակութային եւ մարզական միութիւններու եւ եղբայրութիւններու ներկայացուցիչներ:

Յուզիչ եւ սրտաշարժ էր արարողութիւնը, որ կը վարէր Արժ. Տ. Կոմիտաս Բիւյ. Տատաղեան: Արտասանուեցան սաղմոսներ, ընթերցում մարգարեութիւններէն, ընթաց-



նուի պատկերը հոգեւորականի մը, որ իր գարուն հասակին, իր ուժերու ծաղկման գեղեցկագոյն օրերուն,

յանկարծ կը լքէ ու կը հեռանայ մեզմէ: Ոչ ոք կը հաւատայ որ այդքան շուտ ամէն բան կիսատ թողած՝ եւ երագդ հետդ շալկած, յանկարծ կը հեռանաս մեզմէ:

Դառն ու չոր իրականութիւն...: Ս. Խաչ եկեղեցւոյ դասը հանգչած է եղիշէ Վարդապետին անշնչացած մարմինը, քահանայի, մարգարէի, թագաւորի շքեղութեամբ պատրաստ՝ երթալու իր Արարիչին մօտ, թէեւ մենք պատրաստ չենք երթաւ բարեւա ընելու:

Յինգշաբթի, 26 Ապրիլ 2018, հոծ բազմութիւն մը ժամադրուած էր Ս. Խաչ եկեղեցի՝ ներկայ գտնուելու



քին, «Նարեկացի» երգչախումբը ինչեցուց քանի մը շարականներ վախճանեալ վարդապետին յայտագիրէն, ապա աւետարաններու ընթերցում հայերէն եւ արաբերէն լեզուներով:



կը ներշնչուէիր մոռնալով ամէն բան այդ պահուն:

Յուզիչ էր տեսարանը...: Յուզիչ էր դագաղիդ շուրջ տեսնել հարիւ-

վախճանեալ վարդապետին յուղարկաւորութեան: Առաւօտեան ժամը 11:00-ին, սկսաւ եկեղեցւոյ Կարգը՝ հանդիսապետութեամբ Թեմիս Բարեշան Առաջնորդ Արիի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի:

Ներկայ էին, քաղաքի բոլոր առաջնորդները, վարդապետները, ֆրերները, մայրապետները: Լիբանանէն Արիի. Տ. Գեորգ Եպս. Ասատուրեան, որ ընթերցեց Ամեն. եւ Գերեջ. Տ. Տ. Գրիգոր-Պետրոս Ի. Կաթողիկոս Պատրիարարի երիտասարդներ, որոնք արցունքով կը շրջապատէին իրենց դեկավարը, եղբայրը, ընկերը, ինչու չէ նաեւ հայրը: Բայց բոլորն ալ որբացած նոյն կորուստով:



Սիրելի՛ Վարդապետ, տրտում ենք այսօր, որովհետեւ մեզմէ իւրաքանչիւրին հոգւոյն մէջ կը յայտ-

արքին ցաւակցական նամակը: Չըմամու Պատրիարքական Միաբանութենէն՝ Յ. Անտոն Վրդ. Նորատունկեան, Յ. Պերճ Վրդ. Սապը եւ Յ. Տիգրան Վրդ. Փիլիպոսեան: Պաղտատեն՝ Գերապայծառ Տ. Ներսէս Թ. Ծայրագոյն Վարդապետ Չապարեան: Ներկայ էին նաեւ պետա-

«Ահեղ Խորհուրդ» շարականէն վերջ, Տ. Կոմիտաս Բիւյ. Տատաղեանի կողմէ լսելի եղաւ «ՈՂ-ԶՈՅՆ»ը, «Ողջոյն քեզ սուրբ եկեղեցի, Ողջոյն քեզ Սեղան սրբութեան, Ողջոյն ձեզ դասը քահանայութեան եւ հանապարհորդեցի առ արարիչն իմ»: «Ահա հրաժարիմ ի քէն սուրբ եկեղեցի, ահա մեկնիմ ի ձէնձ սիրելի եղբայրք. ի կոչումըն վերանորոգողին Զրիստոսի Աստուծոյ մերոյ»: «Աղօթք արարէք վասն իմ, հարք իմ, եղբայրք եւ որդիք... Եւ օրհնեսցէ զձեզ Զրիստոս Փրկիչ մեր...»: Ընթացքին, ներկայ առաջնորդներ եւ ամբողջ կղերը ուսահամբոյրի եկան Արիի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան Գերապայծառին եւ Թեմիս վարդապետներուն, իրարու տունն եղբայրական սիրոյ ողջոյնը՝ ողջագուրուելով:

Եկեղեցւոյ Կարգէն ետք, նախագահութեամբ Գերապայծառ տիրոջ, Թեմիս վարդապետներու կողմէ դագաղը ուսամբարձ շքեղ թափօրով դուրս բերուեցաւ եկեղեցիէն, ու պետական ապահովութեան ջոկատի մը առաջնորդութեամբ ուղղուեցաւ դէպի «Մայր Գթութեանց» Աթոռանիստ եկեղեցի, ուր կը ծառայէր վախճանեալ վարդապետը: Այնտեղ տեղի ունեցաւ գերեզմանի Կարգը:

Թաղման արարողութենէն ետք, ներկաները վերադարձան Ս. Խաչ եկեղեցւոյ դահլիճ՝ ընդունելու պետական անձնաւորութիւններու, եկեղեցական-ազգային մարմիններու եւ ժողովուրդին ցաւակցութիւնները, որոնց կարգին էին Զալէպի Նահանգապետը (ժամանած Սուրիոյ Նախագահական Պալատին թելադրանքով), Պաաս Կուսակցութեան Զալէպի տնօրէնը, Զալէպի ոստիկանապետը, Գաղտնի սպասարկութեան պետը, ներքին ապահովութեան հրամանատարը, Զալէպի



Աւետարանի ընթերցումէն ետք, խօսք առաւ Արիի. Գերապայծառ Տէրը. ան խոր ցաւով ու յուզմունքով ներկայացուց վախճանեալ վարդապետին կեանքն ու գործունէութիւնը հայերէն եւ արաբերէն լեզուներով: Թող օրհնեալ ըլլայ ըսաւ Աստուծոյ կամքը եւ Յոբի նման պիտի ըսենք. «Տէր տես Տէր եառ»: Եւ պիտի աղօթենք, որ կեանքի եւ անմահութեան Պարգեւատուն իր հաւատարիմ ծառայի հոգին ընդունի ի Դասս երանեալ ծառայից իւրոց:

Մուֆթին եւ կրօնական կալուածներու տնօրէնը:

Խաղաղութիւն արդար հոգի-իդ: Արդարութիւն ազնիւ եւ ազնուական հայու իղձերուդ եւ երագանքներուդ: Աղօթք եւ խո՛ւնկ յիշատակիդ:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ
Յ. Եղիշէ Վրդ. ԸԵՆԾԻ ծնած է Զալէպ 1985-ին: Անդրանիկ գաւազն է իր ծնողքին՝ Անթուան եւ Լէյլա ԸԵՆԾԻներու: Նախնական ուսումը կը սկըպի Ս. գրիգոր Լուսաւորիչ ճեմարանում:
Շար.՝ 12 14

Աշակերտական Անկիւն

70-ԱՄԵՆԿՈ ՇՆՈՐՀԱՌՐ, ՃԵՍԱՐԱՆ՝

Սիրան Արապանեան

Ճեմարանը այն կառույցն է, որ 70 տարի շարունակ հալէպահայութեան ոչ թէ միայն ուսման կարեւոր օջախը դարձաւ, այլեւ սերունդները դաստիարակեց հայեցի շունչով:

Այս կառույցը այսօր 70 տարեկան է, եւ մենք՝ 11-րդ կարգի առաջին բաժանումի աշակերտներս, կարեւոր համարեցինք արժանաւայել կերպով տօնախմբել մեր հօր քերթին 70-ամեակը:

4 Ապրիլ 2018-ին, դպրոցիս «Չարեհեան» սրահէն ներս, ներկայութեամբ 11-րդ կարգի աշակերտութեան, ուսուցիչներուն, տնօրէնութեան եւ խնամակալութեան, բաց յայտարարուեցաւ մեր դասարանի պատրաստած ձեռնարկը: Բացման խօսքը արտասանեց Մելիք Տրմաշ, որ կեդրոնացաւ ճեմարանի առաքելութեան վրայ՝ լաւ փոխանցեց պատերազմի պատճառով հիւնք տարի ճեմարանէն հեռու մնալէ ետք՝ ճեմարանի շէնք վերադարձի մեր ուրախութեան ջերմ ապրումները:



Մարալ Ղազարեան համառօտ ձեռով ներկայացուց Զարէն Եփփէի կեանքն ու սիրագործութիւնները: Մարալին պատմումին կ'ընկերակցէին միս Եփփէի վաւերանկարները:

Շիրազ Գպրճեան ապրումով ու ոգեւորիչ առոգանութեամբ ասումը քեզ Գեորգ Էմիլի «Մենք»ը:

Պարսում Զուլճեան եւ Սիրան Արապանեան ներկայացուցին ճեմարանի հիմնադիր փառանքէն՝ Չարեհ Ա. Կաթողիկոսի եւ Զրաչ Փափագեանի կեանքն ու գործին մասին ամփոփագիր մը:

11-րդ կարգի առաջին բաժանումի աշակերտները հրաւիրած էին 7-րդ կարգէն Աննա Սաղպագ արեանը, որպէսզի մենեզրով մասնակցութիւն բերէ յայտագիրին: Աննան երգեց «Զայոց Տաւեր»ը:

Սեզա Ժամկոչեան, Կարինէ Գարակեօզեան, Տիգրան Պետիրեան, Զրիստ Մինասեան նկարներու ցուցադրութեամբ ներկայացուցին ճեմարանի տնօրէններուն կեանքն ու գործունեութիւնը՝ դպրոցի հիմնադրութենէն ցայտայտ:

Անդրանիկ Մուրաճեան, վերադառնալով դէպի 1947, կարդաց Չարեհ Եպս. Փայալեանի արտասանած խօսքը ճեմարանի բացման հանդիսութեան՝ 27 Դեկտեմբեր 1947-ին:

Ներկաները դիտեցին մեր դասարանի պատրաստած տեսանկարը, որ նուիրուած էր ճեմարանի 70-ամեակին:



Հանդիսութեան ավարտին, ճեմարանի գործադիր տնօրէն պրն. Վահէ Ղազարեան մեծապէս քաջալերեց մեզ եւ նորանոր յաջողութիւն մաղթեց դպրոցին ու աշակերտութեան:

Հանդիսութիւնը փակուեցաւ ճեմարանի քայլերգով:

Ձեռնարկի հանդիսավարը Գառնի Կիւլիմեանն էր, յայտագիրի գլխաւոր բեմադրիչը՝ Կիթառ Աւրեսեանը, կազմակերպական, համակարգչային եւ նկարահանման գործին աջակցեցան՝ Շանթ Սարգիսեանը, Շանթ Այնթապի եւ Սահակ Մատարեանը:


Մեր հաւաքական համերաշխ աշխատանքին շնորհիւ ծրագիրը յաջողութեամբ պսակուեցաւ:

Սիրելի ճեմարան,

Կը խոստանանք քու ջամբած դաստիարակութեանդ արժանի սերունդը ըլլալ, որպէսզի միշտ հպարտ ըլլաս մեզմով:

Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի ժԱ. կարգ, առաջին բաժանում

ՈՒՍՈՒՑՉՁԱԿԱՆ ԱՌՕՐԵԱՅԷՍ...



Լուսին Ապաճեան-Չիլկերչեան

Դպրոցական օրերուս, կը յիշեմ, որքա՛ն կ'ուրախանայիք, երբ դասարանի աշակերտներս արտադրոցական ձեռնարկի մը ներկայ գտնուէինք: Այդ ուրախութիւնը, այսօր, կը տեսնեմ՝ լաւ աշակերտներուս դէմքին:

Տարեշրջան մը իր լրումին հասցնելու հրճուանքով կը պատրաստուէինք ամավերջի քննութիւններուն: Նոյն օրերուն, տեղի կ'ունենային ապրիլեան բազում ձեռնարկներ, սակայն քիչերն էին, որոնք դրոցական աշակերտներուն ուղղուած էին: Այս նպատակին ծառայող ցուցահանդէսի մը այցելութեան հրաւերը ստացանք:

Վերջին դասապահն էր, երբ տնօրէնուհին եւ ուսուցչուհիներուն

րու, ֆիտայիներու կողքին կոուռը քաջարի կիներու եւ աղջիկներու պատկերներ: Աւելին, իւրաքանչիւր տաղաւարի ցուցադրուած պատկերներուն պատմականն ալ կը ներկայացուէր այդ խոստմնալից երիտասարդներուն կողմէ՝ շատ հասկընալի ու պարզ ոճով:

Այո՛, այդ երիտասարդները ժամեր տրամադրած էին ոչ միայն սրահը յարդարելու, լաւ ցուցահանդէսի նիւթին մասին գիտելիքներ ու դրոցներ հաւաքելու եւ պատմելու այցելուներուն: Ներկայացման եղանակն ալ բաւական ուշագրաւ էր: Ոմանք սովորական, ուրիշներ ալ աշակերտներուն հարցումներ ուղղելով կը փորձէին ակելի հետաքրքրա-



հսկողութեամբ Հայ Աւետարանական Բեթէլ Երկրորդական վարժարանի 4-րդ, 5-րդ եւ 6-րդ կարգի աշակերտները մէկիկ-մէկիկ օթօքար բարձրացան, այս անգամ քիչ մը ակելի կարգապահ ու հնազանդ:

Այցելութեան վայրը Արամ Մաւնուկեան Ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» մշակութային սրահն էր, շարժառիթը՝ ցեղասպանութեան նուիրուած ցուցահանդէսը, կազմակերպուած Սուրիահայ երիտասարդաց Միութեան կողմէ:

Սովորական ցուցահանդէս մը կը թուէր ըլլար: Սակայն երբ հասանք ճշդուած վայր, աշխատանքի նոր ոճ, նոր մօտեցում տեսանք այնտեղ:

Տպաւորիչ էր մանաւանդ, երբ շէնքի դրան սեմին կազմակերպիչ կողմի երիտասարդներէն մէկը մեր ժամանումին կը սպասէր ու մեզ հիւրընկալելով կ'առաջնորդէր սրահ:

Նախքան սրահ մուտքը աշակերտներուն ըսուեցաւ. «Այժմ դուք ներկայ կ'ըլլաք Հայոց Ցեղասպանութեան նուիրուած ցուցահանդէսին: Կը խնդրուի կարգապահութիւնը պահել»:

Աշակերտներուն կողմնակի խօսակցութիւնները դադարած էին, անոնք լրջութեամբ հետեւեցան գիրենք առաջնորդներուն:

«Ցեղասպանութենէն Անկախութիւն» խորագիրը կրող ուսուցողական ցուցահանդէսը ներկայացընողները հազիւ 17-18 տարիքը բոլորած դպրոցական տղաք եւ աղջիկներ էին: Ցուցադրուած էին ո՛չ թէ ցեղասպանութեան գոհերու կուտակուած աճիւններ կամ գլխատուած գանկերու տեսարաններ, այլ այդ տարիներուն իւրաքանչիւր շրջանի մէջ մղուած ինքնապաշտպանական հերոսական կռիւներ, գորավարներ-

կան դարձնել մատուցուած նիւթը: Հայերէնի գործնական դասապահ մըն էր, ուր ներկայացուեցաւ մեր պատմութիւնը՝ եղեռնի օրերէն սկսեալ մինչեւ մայիսեան փառահեղ յաղթանակ:

Այդ օրը, ինչպէս աշակերտներուն, այնպէս ալ ինծի համար հպարտութեան, ոչ թէ սուգի օր մըն էր:

Այդ օրը տեսայ, որ մեր երիտասարդներն ու պատանիները, մեր աշակերտները, այնպէս չեն ինչպէս կը ներկայացնէն ոմանք՝ անտարբեր, այլասեր, իրենց պատմութեան ու մայրենիին հանդէպ հետաքրքրութիւն չցուցաբերող... Եւ այլն: Փաստօրէն ուսուցման եղանակներն ու միջոցներն են թերի: Այս ջընաղ երիտասարդներուն խանդը, անոնց շրթներէն արտասանուած ճշգրիտ նախադասութիւնները հոգիս պարուրեցին անհուն գոհունակութեամբ, լաւատեսութեամբ: Մեր միութիւններուն դաստիարակչական մարզը նորոգեալ թափով օժտելու քայլ մը առնուած էր այս սրահին մէջ:

Անոնք փաստեցին, որ նահանջող ու անտարբեր սերունդ չեն. մամուլին մէջ մերթը ընդ մերթ հնչող յոռետես մտքերը արձագանգը չեն հանդիսանար իրենց սպասումներուն, իրենց մտքերուն, դաստիարակութեան նորօրեայ ոճ ու եղանակ ակնկալող իրենց պահանջներուն:

Այսօրուան գործունեայ երիտասարդները կրնան ըլլալ վաղուան պատասխանատու մարմինները: Ուրեմն պէտք է վստահիլ մեր երիտասարդներուն եւ նոր միջոցներով, նոր եղանակով գործի մղել գիրենք, լուսաւորել անոնց ճամբան քննադատութեան կողքին խրախուսանքով, աշխատանքով՝ յառաջ մղելու գիրենք ու գործակցելու իրենց հետ:

ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ ՀՍԿՈՒՄ ԵՒ ԶԱՅԵՐԹ

Երկուշաբթի, 23 Ապրիլ 2018-ի երեկոյան ժամը 6:00-ին, Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հսկումի արարողութիւն՝ ի յիշատակ Ապրիլեան եղեռնի սրբա-



դատած զոհերուն, գլխաւորութեամբ Ճեգրիէի Հայոց Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Տ. Ռուբէն Աբղ. Նալպաստեանի:

եան վարիչ Սեդրակ Ղուկասեան, որ ըսաւ. «Այսօր ազգիս դէմ գործադրուած աննախընթաց ոճիրին 103-րդ տարելիցն է, որուն յիշատակը կ'ոգ եկոյ՛ն մեր երիտասարդներն ու պատանիները իրենց պատրաստած յայտագիրով, ինչպէս նաեւ յարգանքի տուրք կը մատուցեն Արցախեան քառօրեայ պատերազմի նահատակներուն՝ շեշտելով մեր ազգի ուժն ու կամքը, պայքարելու եւ յաղթանակելու վճռակամութիւնը»:

Անդրադառնալով միութեան առաքելութեան, ան դիտել տուաւ որ. «Նոր սերունդը մեր վաղուան յոյսն է: Ան պիտի շարունակէ նախնիներուն երթը մինչեւ



Աղօթքէն ետք հաւատացեալ ժողովուրդը հայր սուրբին, քահանայ հօր, դարբաց դասին եւ թաղական կազմին առաջնորդութեամբ մովերով ուղղուեցաւ դէպի Ազգ. Միացեալ միջնակարգ վարժարանի շրջափակ, ուր ապրիլեան եղեռնի յուշակոթողին դիմաց մովեր տեղադրուեցան, ապա տեղի ունեցաւ հսկում կազմակերպութեամբ Սուրբիոյ Երիտասարդ Միութեան Վարչութեան եւ Չաւարեան Պատանեկան Միութեան Վարիչ Կազմին:

արդարութեան վերջնական տիրացում: Պատանեկան ու երիտասարդական միութեանց մէջ է, որ մեր սերունդները կը սորվին հայոց պատ-



մութիւն, հայ ազատագրական պայքարի պատմութիւնն եւ այլն»:

Գեղարուեստական յայտագիրը շարունակուեցաւ Հայոց Տեղասպանութեան եւ Արցախեան քառօրեայ հերոսամարտին նուիրուած քառ-



ներով, որմէ ետք ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին անմահ նահատակներուն յիշատակը, ապա ինչեցին Սուրբիոյ եւ Հայաստանի քայլերգները: Բացման խօսքով հանդէս եկաւ Չաւարեան Պատանեկան Միութեան

եակներու ասմունքով, պարի ներկայացումով եւ պատանեկան երգչախումբին ելոյթով: Աւարտին, հոգեշնորհ հայր սուրբը իր հայրական օրհնութեամբ եւ «Պահպանիչ» ով փակեց հսկումը: **Բժշկ. Մարի Մելքոն**

ՀԱԼԵՊԻ ՄԷՋ...

Սկիզբ՝ էջ 1

րաստիճան պատասխանատուներ, ասորի համայնքապետներ, հալէպահայ համայնքապետներ, ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոսը, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան եւ հայկական միութիւններու ներկայացուցիչներ, ՀՍՀՄ-ի փողերախումբը եւ երիտասարդներու հոծ բազմութիւն մը:

Ներկայ պաշտօնական բոլոր կողմերը հանդէս եկան խօսքերով՝ դատապարտելով Հայոց Տեղասպանութիւնը եւ իրենց զօրակցութիւնը յայտնելով հայ ժողովուրդին:

Բողոքի ցոյցին բացումը կատարեց ՀՍՀՄ-ի փողերախումբը՝ Սուրբիոյ եւ Հայաստանի քայլերգներով, ապա փողերախումբին կատարումով ազգային, հայրենասիրական երգեր ինչեցին:

Հաւաքին մասնակից Սուրիական Ազգային Կուսակցութենէն խումբ մը նուագախումբով եւ դրօշներով մուտք գործեց ճեմարան, խումբը պահ մը կանգ առնելով հայ ժողովուրդին զօրակցութեան կոչեր ինչեցուց, ապա իր մասնակցութիւնը բերաւ բողոքի հաւաքին:

Բացման խօսքով հանդէս եկաւ Սիլվա Ճապաղջուրեան: Ան ըսաւ, որ թրքական բարբարոսութեան արդիւնքով գոհուած բոլոր նահատակները միացած են արեան իրենց ճանապարհին մէջ՝ դիտել տալով, որ բոլոր այն ազգերը, որոնք Թուրքիոյ վայրագութեան զոհ դարձած են շարդերու միջոցով, երթարկուած են նաեւ բռնի թրքացման քաղաքականութեան: Ճապաղջուրեան դիտել տուաւ, որ երեկուան հին օսմանցին եթէ անցեալին ստանար իր պատիժը, այսօրուան թուրքը պիտի չկրկնէր իր վայրագութիւնը, այլ երկիրներու մէջ ալ նման շարդերու կազմակերպումը, տարածքներու գրաւումը, մշակութային կոթողներու քանդումը, դրացի երկիրներու քաղաքակրթութեան ոչնչացումն ու վերջապէս ուրացման իր քաղաքականութիւնը:

Բացման խօսքէն ետք հանդէս եկաւ Պաղեստինեան ուժերու ներկայացուցիչ փաստաբան Սամիր Նաճիպ: Ան ըսաւ, որ 100 տարի առաջ հայ ժողովուրդին կրած տառապանքը Օսմանցի Թուրքիոյ ձեռքերով, կը կրէ նաեւ Պաղեստինի արաբ ժողովուրդը՝ 70 տարիներէ ի վեր, մինչեւ օրս, Սիւնիզ մին պատճառով: Այսօր Երտողան, որ Օսմանեան Կայսրութեան ժառանգորդն է, Սուրիոյ ժողովուրդին դէմ շարդի նոյն քաղաքականութիւնը կը կիրառէ: Ան յայտնեց, որ անիրաւուած ժողովուրդները անպայման յաղթական դուրս պիտի գան:

Ապա Հալէպի Սուրիանի Ուղղափառ Համայնքի Պատրիարքութեան ներկայացուցիչ Պութրոս Զասիս խօսք առնելով ըսաւ, որ Թուրքիոյ բնաջնջման քաղաքականութիւնը իր նպատակին չհասաւ, որովհետեւ ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդներ իրենց ապրելու կամքին ու պայքարին շնորհիւ Յարութիւն առին:

Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Մահեր Մուաքքէ խօսք

առաւ, շեշտեց, որ պատմութիւնը ինքզինք կը կրկնէ եւ Օսմանական Թուրքիոյ 100 տարի առաջ ի գործ դրած յանցագործութիւնը մարդկութեան դէմ, հայերուն եւ ասորիներուն դէմ, այսօր կը շարունակուի արաբական աշխարհին եւ արաբ ժողովուրդին, մասնաւոր Սուրիոյ դէմ:

Ապա բռնագրաւուած սուրիական Լիուա Իսկէնտերունի բարեսիրական միութեան նախագահ Շահին Ալիաճճի յայտնեց, որ այսօր, հաւաքուած ենք ոգեկոչելու հայ ժողովուրդի այն նահատակները, որոնք իրենց պատմական հողերէն բռնի տեղահանուելով շարդուեցան, բաժնելու նաեւ Լիուա Իսկէնտերունի եւ Կիլիկիոյ քաղաքներու ժողովուրդներուն ցաւը: Ապա ան պահանջեց միջազգային ընտանիքէն, որ պատժէ ոճրագործ Թուրքիան հայ եւ սուրիացի ժողովուրդներուն դէմ ի գործ դրած իր բարբարոսութիւններուն եւ անիրաւութիւններուն համար՝ շեշտելով որ հայ եւ արաբ ժողովուրդներուն ցաւը մէկ է:

Այնուհետեւ Սուրիական Ազգային Կուսակցութեան կողմէ խօսք արտասանեց Մուսթաֆա Սուֆի: Անոր յաջորդեց, Սուրիական Ժողովրդավար Կուսակցութեան քաղաքական գրասենեակի անդամ ճորճ Մրճանէի Թուրքիան դատապարտող եւ արդարութիւն պահանջող խօսքը: Մրճանէ դիտել տուաւ, իր կուսակցութեան զօրակցութիւնը յայտնեց հայ ժողովուրդին՝ պահանջելով համայն աշխարհէն լուռ չմնալ, շեշտելով որ հայ եւ արաբ ժողովուրդները լուռ պիտի չմնան, այլ պահանջատեր պիտի ըլլան վերադարձնելու իրենց բոլոր բռնագրաւեալ հողերը, ինչպէս նաեւ Լիուա Իսկէնտերունը:

Սուրիական Ազգային Արժեքներու Պահպանման Մարմնի նախագահ Ապտուլ Հատի Նասրի ըսաւ, որ այսօրուան հաւաքը կը ներկայացունէ Սուրիոյ ողջ ժողովուրդին, յատկապէս Հալէպի ժողովուրդին գարկերակը՝ ամէլցնելով որ Սուրիոյ ժողովուրդը այսօր մէկ շարքով դէմ կը կանգնի թուրք թշնամիին: Օրուան հանդիսավարն էր Պէթի Զիլերճեան:

Արտասանուած խօսքերէն ետք, հայրենասիրական երգերով ելոյթ ունեցան՝ Համբիկ Հեքիմեան, Լուսի Յովհաննեսեան, Վահէ Յովհաննեսեան, Նուագակցութեամբ՝ Ռաֆֆի Ապէճեանի (երգեհոն) եւ Ժան Գալաքեանի (կիթառ):

Աւարտին, ներկաները շրջափակին մէջ հաւաքուած թրքական արտադրութիւններ, խորհրդանիշներ ու դրօշ հրկիզելով թրքական արտադրութիւնները չքաշալերելու կոչ ուղղեցին: Բողոքի հաւաքին ընթացքին փոքրիկներուն բաշխուեցան ծրարներ, որոնք կ'ընդգրկէին տեղական արտադրութեամբ ուտեստերէն՝ առ ի քաջալերանք սուրիական արտադրութիւններուն եւ մերժում թրքականին:

Բողոքի այս հաւաքին անդրադարձան ամէլի քան ինը լրատուամիջոցներ, որոնց կարգին էին «Ալ Մայատին» եւ «RUPTLY» պատկերասփիւռի կայանները:

Հաւաքը սփռուեցաւ «Ռատիօ Երազ» ի ուղիղ հեռարձակումով:

ՄՏԱՄԱՐԶԱՆՔ



ԽԱՉԲԱՌ (ՄՆ 246)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- Հետեւեալ խօսքին հեղինակը. «Ի՛նչ էլ լինի, թե՛ թշնամուն եւ թե՛ բարեկամին յարգանք ու պատկառանք ներշնչողը, դժբախտաբար, դեռ կրպիտ ուժն է»:
- Արտասովոր: Իգական օտար անուն:
- Երկբարբառ: Կնոջ ամուսնոյն եղբայրը:
- Վանայ լիճի կղզիներէն: Տարի:
- Արժէք: Ջրախառն մածուն:
- Շատ պաղ: Պատերազմական նաւ:
- Պատարագի սուրբ սեղան: Հակառակ՝ Սրունքի վերի լայն մասը, գիստ:
- 5300:
- Սարսափ: Ասացուածքը կ'ըսէ. «..... գործողութենէն առաջ է, ինչպէս փայլակը՝ որոտումէն առաջ»:
- Տառի մը անունը: Հակառակ՝ հանքային համեմ: Սուրիահայ գրող-ներու տարեգիրք:
- Մէկը: Կաթիլ: Հակառակ՝ խուզուած ու մաքրուած ոչխարի բուրդ:
- Սիամանթոյի ծննդավայրը: Ծեծել:

Ուղղահայեաց

- «Սպանուած Աղանին» վիպակին հեղինակը: Ծովեզերքի վրայ լուսաշտարակ:
- Առարկայ: Չուարթ: Խեղճ, թշուառ:
- Ան, որուն կը վիճակուի կտակ մը:
- Ձայնաւոր տառեր: Թաղանթ:
- Ջուր դառնալ, ջրոտիլ: Տարուան ամիսներէն: Հակառակ՝ 420:
- Հայ իմաստասեր փիլիսոփայ, իր գործերն է «Գիրք սահմանաց» կամ «Սահմանք իմաստասիրութեան»:
- Յարաբերական դերանուն: Կերպասի լայնք: Հակառակ՝ տնկելի ոստ:
- 7003: Հակառակ՝ 4400:
- Լեզուով մը՝ այր: Ճարտարութիւն, գեղեցիկը ստեղծող ձիւրք:
- Թանկագին քար: Թեթեւ քուն:
- Կղզայնք, փականք: Հակառակ՝ տառի մը անունը: Տառի մը անունը:
- Լերան գագաթ: Բայական լծորդութիւն:

«ԳՈՒՍԱՆԱԿԱՆ...»

Սկիզբ՝ էջ 6

«Ն. Աղբալեան» Մասնաճիւղի երաժշտական յանձնախումբի երաժիշտներուն եւ մենեզողներուն մասնակցութեամբ, Շաբաթ, 14 Ապրիլի երեկոյեան ժամը 21:00-ին, Քեսապի «Նիրվանա» ճաշարանէն ներս տեղի ունեցաւ «Գուսանական երեկոյ»-ն՝ ներկայութեամբ 250 հրաւիրեալներու:

Օրուան բեմավարն էր Սօսի Կարճիկեան:

Ան բեմ հրաւիրեց երաժիշտներն ու մենեզողները, որոնք հայ աշուղական երգերով մեծ ոգելորութիւն պարգայեցին ներկաներուն: Պարահանդեսի աւարտին ճաշարանը թնդաց հայ յեղափոխական եւ հայրենասիրական երգերով:

Հալեպի, Լաթաքիոյ եւ Քեսապի ելոյթները եզակի պահեր դրոշմեցին մեր ժողովուրդին յիշողութեան մէջ:

Պատրաստեց Մարինա Զիւլքըռէան-Պողիկեան
ՍՈՒՏՈՔՈՒՄ (ՄՍ 246)

Տեղադրէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

	2	1	4	7			6	5
			8			1		3
				5				
	7	9			6			2
8				9				1
		2	5			4	7	
	1		9	6				
		6		3	8			4
		8				2		

ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 17)

Եկեղեցւոյ եւ եկեղեցականներու զգեստին վերաբերող բառերը շնչելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 8 տառերէ բաղկացած եկեղեցականներու զգեստէն բաժին մը կը ներկայացնէ:

բ	մ	ա	ս	ն	ա	տ	ո	ւ	փ
ս	ա	խ	ն	կ	ա	մ	ա	ն	բ
խ	ա	ժ	ս	փ	ս	կ	ի	հ	ո
ա	ա	ա	ա	ց	ա	դ	բ	խ	ւ
2	մ	չ	ո	կ	ե	կ	դ	ա	բ
տ	կ	2	վ	թ	ա	բ	ե	չ	վ
ա	ք	ե	ն	ա	ա	մ	բ	դ	ա
ն	մ	ա	բ	դ	ո	յ	ա	ա	ո
ա	կ	ո	ե	ո	ու	ա	ն	բ	
կ	տ	վ	մ	խ	ն	ս	ք	ե	մ

սկիւի, բուրվառ, աշտանակ, կերոն, մասնատուփ, խաչ, կանթեղ, քոց, բաժակաման, խնկաման, խաչվառ, փակեղ, վեղար, սքեմ, խոյր, մոմ, մաս, իր

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱՉԲԱՌ (ՄՆ 245)

ՍՈՒՏՈՔՈՒՄ (ՄՍ 245)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1	ա	կ	ն		խ	ո	դ	խ	ո	դ	ե	լ
2	բ	ա	յ		ո		ա	բ	ե	ն		
3	հ			ո	ւ	բ		խ	ա	կ		
4	ե	բ	թ		ն		լ	ո	կ	կ	բ	
5	ս	ո	ւ	ն	կ		ի	բ	բ	ո	ն	ն
6	տ			ո		ն	ա	խ	ի	մ	ա	
7	ա	բ	ո	յ	բ		ո	խ		ի	ջ	
8	վ	ա	յ			ի	բ	ա	տ	ի		
9	ա	բ	ա	մ	ե	բ	կ	ա	ն	ե	ա	ն
10	բ	ա		ա	բ	տ		տ		ս	ջ	
11	ժ		ա	բ	ա		ո		տ	օ		
12		ֆ	բ	ա	ն	ց	վ	ե	բ	ֆ	ե	լ

6	2	8	3	1	4	7	5	9
5	9	4	8	7	2	1	3	6
7	1	3	6	9	5	4	2	8
1	7	2	4	8	9	3	6	5
9	4	6	5	3	7	8	1	2
3	8	5	1	2	6	9	4	7
2	3	9	7	6	1	5	8	4
4	6	1	9	5	8	2	7	3
8	5	7	2	4	3	6	9	1

ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 16)

Պահուած բառը՝ «Իրիկուան Չայներ»

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ

Չգացական խնդիրները շատ լավ է են: Բաժանում եւ նիւթական դժուարութիւններ պիտի ունենանք: Յանկարծակի պիտի գաք ձեր սիրելիին կամ կողակիցին որդեգրած դիրքով:



ՅՈՒԼ

Ձեզ քաջալերող եւ խրատող ընկերոջ մը պէտք ունիք: Մի՛ բարոյացընէք խնդիրները: Դժուարութիւն պիտի գտնէք՝ դիմագրաւելու իրականութիւնը, որ չի համընկնիր ձեր գագացական կեանքին:



ԵՐԿՈՐԻՆԵԱԿ

Աշխատանքային վեճի մէջ մի՛ մտնէք ձեր գործին ընթացքին: Առիթի մը համար հրաւեր պիտի ստանաք: Ամսուան լավ օրերէն մէկն է:



ԽԵՑՂԵՏԻՆ

Պատասխանատուութիւն պիտի վերցնէք եւ պէտք պիտի գագայաշտպանելու ձեր բարեկամներուն շահերը: Նորութիւններուն հետ պիտի յաջողիք համակերպիլ:



ԱՌԻԾ

Վատ տրամադրութիւն պիտի ունենաք: Գաղտնիք մը պիտի բացայայտուի: Թշնամական դիրք պիտի որդեգրէք: Ձեր որոշումին վրայ կառչած պիտի մնաք:



ԿՈՅՍ

Շատեր կարիք ունին ձեր քաջալերանքի եւ գօրակցութեան: Մտածեցէք անոր մասին, որ պէտք ունի ձեզի եւ ձեր պատասխանատուութեան:



ԿԵՒՈՔ

Որոշում մը տալու համար լսեցէք ձեր սիրելիին խրատը: Աշխատանքային յաջողութիւն մը պիտի արձանագրէք:



ԿԱՐԻՃ

Գաղտնի աշխատանք մը պիտի տանիք: Նոր տուն պիտի փոխադրուիք կամ յարաբերութիւն մը պիտի խզէք ու նոր էջ բանաք: Ձեզ նեղացընող լուր մը պիտի լսէք:



ԱՂԵՂՆԱԻՐ

Նոր աշխատանք մը պիտի առաջարկուի ձեզի կամ ճամբորդութեան հրաւեր մը պիտի ստանաք: Դժուար պայմաններու մէջէն կ'անցնիք, հարկաւոր ե' ըլլաք իմաստուն եւ զգօն:



ԱՅԾԵՂԶԻՐ

Ընտանեկան հարցերը պէտք ունին ձեր ուշադրութեան: Ընկերային կեանքին մէջ կարեւոր դեր մը պիտի ունենաք:



ՋՐՈՍ

Դիւանագետ եղէք ձեր քննարկումներուն մէջ: Ուշադիր եղէք անհասկացողութեան: Պիտի ստանաք այն, ինչ որ կը փափաքէիք:



ՁՈՒԿ

Նոր ընկերներ պիտի ունենաք: Պիտի մասնակցիք մեծ խրախճանքի մը, որուն աստղը դուք պիտի ըլլաք: Նոր լուրեր պիտի ստանաք:



ՎԱՐՂԻՆ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վարդը շատ մը ազգերու մօտ սիրոյ, գեղեցկութեան, պատերազմի, քաղաքականութեան խորհրդանշէ է:

Վարդերու առաջին գիտական բնութագրումը տուած է հին յունական բնախոյզ, փիլիսոփայ եւ բուսաբան Թեոփրաստը: Ան բաւական մանրամասն կարագրած է վարդի եւ դաշտային վարդերը, հիմնաւորած է անոնց մշակման եւ բազմացման ձեւերը:

Վարդի բուրմուկը անկայ է կանաչի անուշահոտերու աւելի քան 90 առ հարիւրին եւ տղամարդոց համար նախատեսուած բուրմուկներու



արտադրութիւններու շուրջ 50 առ հարիւրին մէջ, լայնօրէն ներկայացուած է գեղանկարչութեան մէջ, յատկապէս Զլոտ Մոնէի, Փօլ Սեզանի նկարներուն մէջ: Պոմպէի հրաշալի խճանկարին վրայ, որ կը գտնուի Նեափոլի թանգարանին մէջ, կարելի է տեսնել դամասկոսեան վարդեր, որոնց հայրենիքը անկասկած արեւելքն է, ուրկէ ալ անոնք յայտնուած են Զարաւային Իտալիոյ այգիներուն մէջ:

Վարդը կ'օգտագործուի անուշի, օշարակի, հացատեսակներու արտադրութեան մէջ: Վարդի թերթերը ունին քաղցր, գովացող համ, կը պարունակեն շուրջ 300 տեսակ նիւթեր, որոնցմէ ուսումնասիրուած են 100-ը՝ յատկապէս եթերային իւղերը, B, C, E, K կենսասիւթերը:

Հայաստանի մէջ կարմիր վարդի թերթիկները կ'օգտագործուին՝ լեարդի, իսկ ճերմակները՝ սըրտի հիւանդութիւններու պարագային, Ֆրանսայի մէջ՝ որպէս «C» կենսասիւթի եւ որդաթափումի միջոց: Ստամոքսի եւ 12-մատնեայ աղիքի վերքերու պարագային՝ կարմիր, սպիտակ կամ վարդագոյն վարդերու թերթիկներուն թուրմը (եռա-



ցած ջուրի մէջ տեղադրուած թերթիկներ) օգտակար կը համարուի, տիգանթերի պարագային՝ կարմիր վարդի թերթիկներուն թուրմը: Կարմիր վարդի թուրմը կ'օգնէ նաեւ աչքերու հակամեխումին:

Ա. Ամասիացի վարդերու մասին գրած է հետեւեալը. «Լաւագոյնը կարմիր հոտաւետ վարդն է: Ան օժտուած է չորցնող ու ամրացնող յատկութեամբ:

եամբ: Վարդին հոտը կ'օգնէ գլխացաւէն ձերբազատուելու: Հիւթը կ'օգնէ ատամի եւ ակակնջի ցաւը մեղմացնելու, ինչպէս նաեւ՝ բերնի խոցերը բուժելու:

«Վարդին հոտը կ'ամրացնէ սիրտը, օգտակար է ստամոքսին, լեարդին ու որովայնի խոռոչին համար: Ծաղիկներուն հիւթը կը բուժէ աղիքներուն խոցերը: Վարդին իւղը օգտակար է միզապարկին համար, կը բուժէ էքզիման»:

- Վարդի թուրմով թրջոցները կ'օգնեն դէմքի ուռեցքի եւ գրգռուած մաշկի պարագային:

- Վարդի ծաղկաթերթերը ճակտին եւ քիմքին դնելու պարագային գլխացաւը կը մեղմանայ:

- Վարդի թերթերով պատրաստուած թուրմը (2 ապուրի դգալ, 200 մլ. եռացած ջուր) օգտագործեցէք բերնի ողողումներուն համար: Վարդի ջուրը ունի խոնաւցնող յատկութիւն, մորթը կը պաշտպանէ արեւի ազդեցութենէն:

- Վարդի իւղը կը կանխարգիլէ երակներուն վարիզը՝ լայնացումը, կ'օգնէ ճնշուածութեան, վախի, ջղայնութեան, խանդի պարագային: Վարդի իւղին բուրմուկը կը կիրառուի որպէս պրոնշիդի բուժման միջոց: կ'օգտագործուի նաեւ մերսուներու համար:

ԴԻՄԱԿՆԵՐ

- Մորթը փափուկցնող դիմակ
- 60 կրամ վարդի թերթերուն աւելցուցէք 2 ապուրի դգալ օղի եւ 200 մլ. գտուած տաք ջուր: Թրջեցէք 30 վայրկեան եւ քամեցէք: Պատրաստուած թուրմին աւելցուցէք 50 կրամ բրինձի ալիւր: Խառնեցէք, միկէ եւ որ խառնուրդը թանձրանայ: Դիմակը քսեցէք դէմքին եւ վիզին: Ձգեցէք 15 վայրկեան եւ լուացէք տաք ջուրով, ետքը դէմքին քսեցէք ձեր մաշկին յարմար քսուկ մը:



- Մորթը երիտասարդ պահող դիմակ
- Վարդի թերթերը մանր մասերու վերածեցէք, 2 ապուրի դգալ մանրուած թերթերուն աւելցուցէք ջուր, միկէ եւ որ ստանաք խիտ գանգուած մը: Չանգուածը 10 վայրկեան տաքցուցէք պան մարէնի ձեւով (շոգեբաղնիքով), պաղելէն ետք գայն քսեցէք ձեր դէմքին: 15-20 վայրկեան ետք դիմակը վերցուցէք բամպակով: Լուացէք դէմքը գաղջ ջուրով: Դիմակը կրնաք կիրառել շաբաթը 1-2 անգամ:

- Դէմքին գոյնը բարելաւող դիմակ
- 2 կոկոնի թերթիկներուն աւելցուցէք 100 մլ. ալքոլ, թրմեցէք ու 2 օր պահեցէք մութ սենեակի մը մէջ, ետքը քամեցէք: Թուրմի 1 ապուրի դգալը խառնեցէք 1 ապուրի դգալ հալած մեղրին եւ մէկ հաւկիթի դեղնուցին հետ: Խառնուրդը քսեցէք դէմքին, ձգեցէք 15-20 վայրկեան, ետքը լուացէք տաք ջուրով:

- Այս դիմակը կրնաք օգտագործել շաբաթը մէկ անգամ:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՄԸՄ...

Սկիզբ՝ էջ 8

ճամբուն վրայ մարդիկ մեր տողանցքը դիտելու համար կանգ կ'առնէին: Դաշնակիցները այդ թուականին ներկայ էին Պոլսոյ մէջ ու մեզ դիտող թուրքերը հաւանաբար նախանձով կը մտածէին. «Աստուծո՛րք վերակենդանացան... Ուրեմն մեր գործը լաւ չենք տեսած, գլուխսին լաւ չենք ձգմած...»:

Իսկ բարեկամ ու համակիր՝ կ'ենթադրեմ, հաճոյքով կը տեսնէին մեր ծաղկիլը:

Անգամ մը, մեր տողանցքը դիտող հայ կնոջ մը մէկ դիտողութիւնը լսեցի ու դեռ չեմ մոռցած.

- Պոյերո՛ւն դուրպան ըլլամ, - ըսաւ, - ասուք երբ մեծանա, ալ մարգանքի պէտք չեն ունենար:

Կը հաւատամ թէ հայ կինը մեզի համագգեստ, զինուորական համագգեստ հազցուցած՝ Հայաստանի սահմաններուն պահան կը դիտեր մտքով, կամ խրամ կ'իջեցներ թշնամիին դէմ անոր սրբազան հողը պաշտպանելու համար... Ու վըստահութիւն ունէր մեր վրայ... Քանի մենք կայինք՝ հայրենիքի ապահովութիւնը իր մտքին մէջ երաշխաւորուած էր...

Բախտը չկամեցաւ, որ մենք, բոլորս, Հայաստանի սահմաններուն պահակ կանգնէինք: Մեզ մէ երեքը միայն իրենց կեանքը տուին անոր համար, մնացեալներս ցրուեցանք չորս հովերուն ու մեր օրերը կ'անցընենք օտարութեան մէջ:

Չենք մոռնար մեր ուխտը. «Ծառայել Հայրենիքին»...

Համեմատաբար կարծամանակավիջոցի մը մէջ, անօրինակ յաջողութիւն ունեցաւ ՀՄԸՄ-ը: Ոչ միայն սերունդ դաստիարակեց ու հայրենիքի սեր ներշնչեց անոնց, ո՛չ միայն «ամողջ միտք՝ ամողջ մարմնի մէջ» տիրական դարձուց, այլեւ՝ ազգին անդամներուն մէջ եղբայրական կապ հաստատեց. Կը բաւէ, որ մէկը ըսէ թէ ժամանակին ՀՄԸՄ-ական եղած է, անոր հանդէպ սեր ու վստահութիւն կը տածեն իր հեռաւոր ու մօտաւոր ընկերները:

Ու այս բանը, ուրացման ու պառակտումի այս օրերուն, փոքր յաղթանակ մը չէ:

ԻՅՆԱԼ...

Սկիզբ՝ էջ 8

«այո՛...այո՛... ո՛չ» ի, սխալեցայ... «կողմ եւ դէմ» ի քուեարկութիւնը:

Ետ դարձի ճամբուն վրայ եմ, ոչ մէկ ինքնաշարժ, ոչ մէկ լուրջ մտածում, միայն աստիճանաբար սաստկացող ցաւ... բազուկս բռնեցք չի դառնար, ետիս բողոքի ձայներ կը բարձրանան, ափերը կը դառնան բռունցք, բարեբախտաբար առանց ընդհարումներու...

Վստահ եմ քուեարկութիւնը կողմ պիտի ըլլայ. - կը հետախուզեմ՝ վարորդին կողմնորոշումը յայտնագործելու:

Թող լինի, մենք չենք յուսահա-

տի, մեր որդիների ապագայի համար պիտի պայքարենք, իմ ընտանիքը սաղ էստեղ է, ես էլ մի կտոր հացի փող հաւաքեմ ու գնամ. - կը պատասխանէ երիտասարդ վարորդը:

«Ինչ լաւ տղաք են» կը մտածեմ ու յաջողութիւն կը մաղթեմ վարորդին...

Մէկ շաբաթ տեւող աներեւակայելի քայլարշաւներ, ծովածաւալ բողոքի ցոյցեր, ոգեւորութիւն եւ յուսահատութիւն:

Դաստակա գաճի մէջ է, ու շքս լուրերուն, ուղիղ եթերով սփռուած իրավիճակին: Վիճակը ծայր աստիճան մտահոգիչ է, 24 Ապրիլը այսպէ՛ս պիտի դիմաւորենք:

Հեռատեսիլի պաստառին վրայ լուրջ դէմքով խօսակը փոխանցեց վարչապետին հրաժարականը.

«Իյնալը արժանավայել պիտի ըլլայ, բարձրունքէն սաւառնելով, ոչ ողորմելի սահելով մայրի թերութեան վրայ ճղճիմ ու խեղճուկ»:

Ճիշդ ատենն էր իյնալու.

Կակաչներու փունջը ձեռքիս կը բարձրանամ Ծիծեռնակաբերդ, կարմիր թերթիկներ ու սեւ միջուկ, սեր, արիւն, պահանջք, փակ սրտի մէջ ննջող թախիծ:

Մարդոց հոսքը կը յառաջանայ օրինաւոր ընթացքով, փոքրիկ տղեկը նստած հօր ուսերուն երջանիկ է, սեւաչեայ աղջնակը ժպիտներ բաշխելով կը յաղթահարէ բարձունքը, երիտասարդները եռագոյն դրօշներ կը ծածանեն... տարիներ երազած եմ մասնակից դառնալ այս երթին:

«Հայր Մեր»-ը կը միանայ անմար կրակի բոցերուն ու կը բարձրանայ դէպի վեր, դէպի վեր...

«Յաղթանակ, Յաղթանակ» կը գոչէ երիտասարդներու խումբը:

Յ. ԵՂԻՇԷ...

Սկիզբ՝ էջ 9

Նեն ներս: Փոքր տարիքէն իր մէջ կը ծնի քահանայութեան կոչումը:

1996-ին կը մտնէ Հալեպի Չըմմառու Փոքր Ընծայարանը:

2002-ին, աւարտելէ ետք երկրորդական աստիճանի պահանջուած ուսմունքները, կը դրկուի Լիբանան՝ Չմմառու Դպրեվանքը շարունակելու փիլիսոփայական եւ աստուածաբանական ուսումները 2002-2008: Ապա կ'անցնի Հռոմ եւ Գրիգորեան համալսարանէն ներս կը շարունակէ իր աստուածաբանական ուսումները 2008-2010 ստանալով համապատասխան Մաճիսթրի վկայականը:

2010-ին կը վերադառնայ Հալեպ՝ իր ծննդավայրը եւ կուսակոսն քահանայ կը ձեռնադրուի Արիի. Տ. Պետրոս Արք. Միլիթեան Գերապայծառին ձեռամբ:

Փոքր տարիքէն հակում ունէր նուագի եւ երաժշտութեան: Եօթը տարեկանին արդէն կը նուագէր ջութակ եւ ապա դաշնամուր: Կը հետեւի երաժշտութեան՝ Լիբանան եւ

Հռոմ. կը մասնագիտանայ ու կը ստանայ տիպլոմ երգի եւ նուագի խումբեր ղեկավարելու: Յանձն կ'առնէ «Նարեկացի» երգչախումբի գեղարուեստական ղեկավարութիւնը եւ բազմաթիւ համերգներով հանդէս կու գայ Հալեպի եւ Դամասկոսի մէջ: Իր վերջին ներկայացումը կ'ըլլայ 17 Ապրիլ 2018-ին, Հալեպի բերդին մէջ, Սուրիոյ Անկախութեան տօնին առիթով կազմակերպուած մեծ տօնակատարութեան:

ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- Ս. Խաչ եկեղեցւոյ ժողովրդապետութեան մէջ.

- Հոգեւոր վարիչ Ս. Խաչ եկեղեցւոյ Սկանտութեան.

- Հոգեւոր վարիչ Ս. Ռիթա եղբայրութեան.

- Հոգեւոր վարիչ Ս. Խաչ եղբայրութեան.

- Հոգեւոր վարիչ Հաւատք եւ Յոյս Թերաքներու սիրոյ ընտանիք խմբակին.

- Խմբավար Նարեկացի երգչախումբին.

- Տնօրէն Նուր Սէթ կաթողիկէ տեղեկատուութեան գրասենեակին:

ՀԱՅԱՍՏԱՆ...

Սկիզբ՝ էջ 5

Նին՝ այսօրուան ու վաղուան. հարց է, թէ փակ դռները ինչպէ՛ս կարելի է բանալ հակադիր ու անգիջող ճակատներուն միջեւ: Պատասխանը պարզ է, թէեւ կիրարկումը կրնայ դժուար թուիլ:

Հայաստան միակ երկիրը չէ, որ մատուած է սահմանադրական կամ քաղաքական տագնապներու: Անցեալ տասնամեակներուն, մէկէ աւելի երկիրներու մէջ (օրինակ՝ 80-ականներու Ֆրանսան) մատուած են այնպիսի վիճակներու, ուր անհաշտ հակառակորդները, դիտրիմ մրցակիցները քով-քովի եկած են ու կազմած՝ միացեալ կառավարութիւն, գայն կոչած են համակեցութիւն՝ քառապիթասիոն: Կարելի է որոնել ու գտնել լուծման այլ ճամբաներ:

Ահաւասիկ քանի մը հիմնական հարց, որ ուն ք պ ա տ ա խ ա ն ի կը սպասեն երկիրին ու ժողովուրդին քարոզում, բարելաւում խոստացողներէն: Այս պատասխաններէն մեծապէս կախեալ են տնտեսական վերականգնումը, արտագաղթի կասեցումն ու մարդկային հոսքին շրջումը, որպէսզի Հայաստանի բնակչութեան թիւը 4 կամ աւելի միլիոնի հասցնելու համար, հարկադրուած չըլլանք սպասելու տասնամեակներով:

Մատնանշումներու ցանկը կարելի է երկարել եւ ժամ առ ժամ նորութիւններ գտնել՝ դէպքերու գարգացման համընթաց արագութեամբ: Կուսակցական ուղեգիծէ շեղումները, խորհրդարանական խմբաւորումներէ հրաժարումներն ու հեռացումները նախանշաններ կու տան այլ փոփոխութիւններու, ընդհանուր խճանկարի վերագծումին, որ եթէ սեպտեմբրեւ բնական

հետեւանք ստեղծուած աննախընթաց վիճակին, միւս կողմէ, բոլորիս ուշադրութիւնը կը կեդրոնացնէ անմիջականի օղակին սահմաններուն մէջ: Մինչդեռ, այս բոլորէն անդին, կայ այլ կարեւոր հարցական մը, որ առաջին անկարկով կրնայ ընկալուիլ իբրեւ վերացական մօտեցում, այս օրերուն լաւ չհնչող փիլիսոփայութիւն:

Բացատրենք, մտաբերելով հայ միտքի տիտաններէ՝ Լեւոն Շանթի «Շղթայուածը» թատերակին մէջ արծարծուած կացութիւններ: Շանթ ընթերցողը տարած է հազար տարի ետ, հասցուցած է Անի, ուր կայ օտար բռնատէր մը. հայ իշխան մը, թարգմանը ըլլալով ժողովուրդին ազատատենչութեան ու ընդվզումին, կը ծառանայ օտար բռնատէրին դէմ ու գայն կը հեռացնէ երկրէն, սակայն շուտով անոր մէջ կը վերայայտնուի բռնատէրը, գայրոյթ եւ ըմբոստութեան տրամադրութիւն տարածելով ժողովուրդին մէջ: «Չգացական» պատգամաբեր տիպար մը կը դառնայ քարոզիչը Մասիսի վիճակներուն մէջ դարերէ ի վեր շղթայուած Արտաւազդին, հաւաստելով, որ ան պիտի գայ քանդելու ստորկութեան շղթաները եւ ազատագրելու ժողովուրդը, սակայն նաեւ կը քարոզէ, որ ամէն բանէ առաջ, պէտք է սեփական հոգիներէն վանել Բռնատէրը: Այս պատգամը արծազանգ կը գտնէ հայ իշխանին բռնատիրութեան դէմ ծառացող մէկէ աւելի դասակարգերու մէջ, որոնք յաջորդաբար ձեռք կ'առնեն իշխանութիւնը, նախ կը հեռացնեն բռնատէր դարձած հայ իշխանը, ապա կը չէզոքացնեն զիրար, որովհետեւ իրենց մէկ գլուխ կը բարձրացնէ Բռնատէրը: Ի վերջոյ, հայ իշխանը օտարներու օգնութեամբ կը վերահաստատուի ինքզինքը: Արտաւազդին սպասումը կը մնայ սպասում...

Իրական կեանքը սոսկական թատրոն կամ գրականութիւն չէ, սակայն թատրոնն ու գրականութիւնը ներշնչում կ'առնեն իրական կեանքէն: Շանթի այս գործը կը ցուցանէ յոռետես մթնոլորտ. Շանթ նաեւ ծանօթ է իբրեւ մտաւորական մը, որուն մէջ միտքի տիրապետութիւնը կը գերակշռէ զգացումը: Հայաստանի այսօրուան վիճակն ալ կը պահանջէ, որ միտքը զգալի դարձնէ ինքզինքը, առանց հրաժարելու ազնիւ զգացումներէ. Միտքը՝ որ վերանկախացումէն ասդին մեծ նահանջ արձանագրած է մեր հայրենիքին մէջ (Հայաստան բացառութիւն չէ, թէեւ ցոյց տուաւ, որ կրնայ զատորոշուիլ եւ չկրկնել «Արաբական Գարուն»ը կամ Ուքրանիոյ նախընթացը...), ասպարեզը ազատ ձգելով «պիզնէս» ի հետամուտ դրօշակիրներուն առջեւ:

Ու գարմանալի՞ է, որ վերջին շաբաթներու շարժումին մէջ կայ մեծ բացակայ մը՝ Մտաւորականութիւնը, որմէ կը սպասուի վերականգնել իր դերը, այնպէս՝ ինչպէս եղաւ 60-ականներուն, Յեղասպանութեան 50-ամեակին, կամ Արցախեան Շարժումի օրերուն: (Միշտ ալ կարելի է առարկել, որ կացութիւնները նոյնը չեն, պէտք չէ նման բաղդատութիւններ ընել):



Ռաֆֆի Միլատեան

ՀԱՅԿԱԿԱՆ

Լիբանանի ՀՄԸՄ-ի Պասքեթ Երոց Խումբը Ապահովեց Աւարտականի Իր Տոմարը

Լիբանանի պասքեթբոլի տղոց Ա. դասակարգի ախոյեանութեան ֆայնալ-ֆորի ծիրին մէջ, Ուրբաթ գիշեր ՀՄԸՄ-ի տղոց կազմը բարձրորակ մակարդակի խաղարկութեամբ, եւ 54 կէտի հըսկայ առաւելութեամբ տապալեց իր հիւրը Սաժէը, եւ բնականաբար ապահովեց աւարտականի իր տոմարը՝ նկատի ունենալով, որ 3-0 արդիւնքով յառաջացաւ իր մրցակիցին վրայ: Մրցումը աւարտեցաւ 119-65 արդիւնքով (34-15, 25-18, 34-10 եւ 26-22): ՀՄԸՄ-ի բարձրագոյն կէտ նշանակողը եղաւ Հայկ Կեօքճեան (18) կէտ: Աւելցնենք, որ ՀՄԸՄ-ի տղաքը տոյն փուլին կրցան երկու անգամ պարտութեան մատնել Սաժէը 89 - 69 եւ 121 - 79 արդիւնքով:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Ծանօթացում Ռուսիա 2018-ի Մասնակից Հաւաքականներու Պատմականին

«ԹԻԻ - 21»

Քոլումպիա

Քոլումպիայի ֆութբոլի պատմութիւնը սկսած է 1924-ին: Նախապատրաստական շրջանին երկիրի ֆութբոլը այդքան ծանօթ չէր, եւ ան իր միջազգային առաջին մրցումը կատարեց 1938-ին, ուր 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Մեքսիքէն: Քոլումպիայի հաւաքականը նախապէս յաջողած է հինգ անգամ իր մասնակցութիւնը բերել համաշխարհային ֆութբոլի մրցումներուն 1962-1990-1994-1998-2014



տարեշրջաններուն. Սոյն մրցումներուն, լաւագոյն արդիւնքը արձանագրեց 2014-ին հասնելով քառորդ աւարտականին: Քոլումպիայի մրցումներուն, իր մասնակցութիւնը բերաւ 21 անգամ, որուն ախոյեանութիւնը արձանագրեց միայն մէկ անգամ 2001-ին: Հաւաքականի պաշտօնական տարագի գոյնն է դեղինը, իսկ փոխ տարագի գոյնն է կապոյտը: Հաւաքականի մարզիչի պաշտօնը վստահուած է Արժանթինցի Խոսե Արքեմանին, իսկ խմբապետն է Խամիս Ռոտրիկէզ:

Արսէն Վենկեր Յայտարարեց Արսենալէն Հեռանալու Մասին

Լոնտոնի Արսենալ ֆութբոլային ակումբի մարզիչ Արսէն Վենկեր պաշտօնապէս յայտարարեց, որ ան մրցաշրջանի աւարտին պիտի հեռանայ իր պաշտօնէն:

Մարզիչի յայտարարութիւնը հրապարակուեցաւ նաեւ ակումբի պաշտօնական կայքէջին վրայ: «Շնորհակալ եմ այս ակումբին երկար ու յիշարժան տարիներ ծառայելու պատիւ ունենալուս համար: Ես խումբը մարզած եմ նուիրողութեամբ ու անկեղծութեամբ: Կը խոստանամ միշտ ըլլալ խումբին կողքին եւ կը մտայնեմ, որ նորանոր յաջողութիւններու հասցնելու: Արսենալի սիրողներն կը խնդրեմ հոգ տանիլ ակումբին: Իմ սերն ու աջակցութիւնը՝ ընդմիշտ ձեզի համար է»: Սոյն գրառումը Վենկեր արձանագրած է դիմատետրի իր էջին վրայ: Վենկեր ակումբը մարզած է աւելի քան 22 տարի: Աւելցնենք, որ 68-ամեայ մարզիչին հրաւերով Հայաստանի ֆութբոլի հաւաքականի կիսապաշտպան Հենրիկ Մխիթարեան միացաւ Արսենալին:



ՅԻՇԷ՛ ՄԱՐԶԻԿ

43 տարի առաջ մարդկային կարամաններ անցան այս ճամբաներէն:

43 տարի առաջ ազգ մը իր գողգոթան քալեց՝ Աստուած որդո՛ւ համբերութեամբ:

43 տարի առաջ, աշխարհ կարծեց, թէ դէպի մահ մեր երթը՝ վերջինն էր: Այլ պիտի անցնէինք պատմութեան:

43 տարի վերջ, հայորդի՛ դիտե՛ բազուկդ պողպատ, նայե՛ բռունցքիդ կրակիթայ, եւ յիշե՛:

Յիշե՛ մտելները մեր, յիշե՛ մտքի ու սուրի մեծերը մեր, յիշե՛ ազգ մաս առ մաս կազմող ամէն մանրամասնութիւն եւ մտաբերե՛, որ անոնք նետուած էին մահուան:

Նայե՛, նայե՛ բարտի հասակիդ, գորաւոր կազմուածքիդ, արու կեցուածքիդ, զգայ աչքերդ ժայթքող բոցի գորութիւն, ներշնչուե՛ ուժեղ, ներշնչուե՛ կամբերդ եւ յիշե՛:

Դուն գաւակն ես մորթուելու դատապարտուած ազգի մը:

Դուն գաւակն ես ժողովուրդի մը՝ որուն մահը կը տեսնան մարդիկ:

Դուն գաւակն ես ցեղի մը՝ որ սակայն հակառակ իր բոլոր դժբախտութիւններուն, տառապանքին, տանջանքի դատապարտուած իր ճակատագրին, ունի ներքին անբացատրելի ուժականութիւն մը՝ որմէ կը պարտուի մահն անգամ:

Հակառակ սաղայեակական հազար սաղարաններու, հակառակ աներեւակայելի հազար գողգոթայի, հաւատաւոր, կամքով լեցուն ու ինքնավստահ կը ճակատի աշխարհին դէմ, ի խնդիր կեանքի ազատութեան:

Յիշե՛ անցեալդ մարզիկ,

եւ աւելի, եւ հազար անգամ եւս ուժ տո՛ւր մկանիդ, կարծրացո՛ւր հոգիդ ու պատրաստե՛՛ զայն նուիրական ու սրբազան սրբագործումին: Բանի՛ Շաւարշ Զրիսեան, Հայկ Ճոլլեան եւ ուրիշներ ինկան մահուան ճամբուն վրայ:

Սակայն նաեւ քանի՛ Վ. Չերագ, Մերճանօ՛Ֆ, Զրիս Ֆեներճեան որպէս խտացած վրէժխնդրութիւն հալածեցին դահիճները ցեղիդ:

Այո՛, մարզի՛կ, նայե՛ բազուկիդ, նայե՛ մկանիդ եւ յիշե՛:

Ազգդ երկ փորձեցին գերեզմանել. - պարտի՛ս ուժանակուիլ՝ գալիք օրերու ի խնդիր:

Ե.



ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւն



100-Ամեակի Կեդր. Յանձնախումբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ


Սիրելի՛ ՀՄԸՄ-ական քոյրեր եւ եղբայրներ,

ՀՄԸՄ-ի 100-ամեակին առթիւ, Սուրիոյ Կեդրոնական Յանձնախումբը պիտի կազմակերպէ վաւերագրական ցուցահանդէս մը, ուր պիտի ներկայացուի Միութեան 100 տարուան պատմութիւնը:

Արդ, կը խնդրենք ձեզ մէ մեզի տրամադրել ձեր մօտ գտնուող միութեանկան յուշանուէրներ, յատկանշական լուսանկարներ, բաժակներ, մետալներ եւ արխիւային այլ իրեր՝ կցուած իրենց բացատրողականներուն:

Յ.Գ.: Ցուցահանդէսն ետք, ձեր արխիւներն ու իրերը ապահով կերպով պիտի վերադարձուին ձեզի:

Կը խնդրուի արխիւները մինչեւ 15 Սեպտեմբեր հասցնել Սուրիոյ Շրջանային Վարչութեան ժողովասենեակ, կամ հեռաձայնել հետեւեալ Whats app-ի թիւերուն. - 0966 39 75 69 - 0933 36 44 24:





ՄԻՋ-ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ

Հայաստանի Հանրապետության 100-ամեակին առիթով, հովանաւորութեամբ ՀՀ 100-ամեակի Սուրիոյ Կեդրոնական Մարմինին, Կիրակի, 29 Ապրիլ 2018-ի յետմիջօրէի ժամը 5:00-ին, Հալէպի «Ասատ» մարզասրահէն ներս տեղի ունեցաւ

քայլերով դրոյագ: Թեքեան Մշակութային Միութեան կողմէ արաբերէն բացման խօսքով հանդէս եկաւ Յարութիւն

րուն առջնութիւն, մենք ունեցանք եղբրական, մութ ժամանակներ, սակայն մեր ազգային կեանքի վերիվայրումներուն մէջ պահեցինք Զրիստոսի Յարութեան գորութիւնը, Երկնաւորէն՝ յուսադրող լաւատեսութիւնը եւ հայրենիք վերակերտելու անընկճելի կամքը»:

Այնուհետեւ յաջորդաբար մըրցումներով եւ ներկայացումներով հանդէս եկան ՀՄԸՄ-ի պատգեթի

ապագայի լոյսը իրենց աչքերուն, բաց ճակատով, հաստատակամ քայլերով Նոր յոյսով, լաւատեսութեան ժպիտով պարուրեցին պատերազմի դառնահամ պտուղները համտեսած հայ թէ տեղացի հանդիսականներուն հոգիները՝ հաստատելով, որ հալէպահայ երիտասարդութիւնը կը մնայ պատնէշի վրայ: ՀՄԸՄ-ի փողերախումբին Նուագակցութիւնը յատուկ կշռոյթ տուաւ անոնց քայլերուն:

Ապա Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակին ու Սուրիոյ



միջ-սկաուտական եւ մարզական փառատօն, մասնակցութեամբ ՀՄԸՄ-ի սկաուտական խումբերուն, մարզիկներուն եւ փողերախումբին ու Հայ Կաթողիկէ Միութեան սկաուտներուն:

Նագարեան, որ անդրադարձաւ Սուրիոյ անկախութեան տօնին՝ դիտել տալով, որ անկախութեան ճամբան վարդերով չէր պատուած, այլ նահատակներու արեամբ, որովհետեւ անկախութեան առաջին իսկ օրէն Սուրիոյ ժողովուրդը պայքարեցաւ դաւադիր զանազան ծրագիրներու դէմ, մէկէ աւելի ճակատներու վրայ՝ մէկ կողմէ Կոլանը բռնագրաւող իսրայէլեան թշնամական քաղաքականութեան, միւս կողմէ Լուս



տողը եւ առջկանց, քարաթի կըրտներ եւ երեք խումբերը: Հանդիսատեսը քաջալերական կանչերով ու ծափողջոյններով հետեւեցաւ մըրցումներուն եւ ներկայացումներուն: Խումբերուն մըրցակցութեան ոգին, աշխոյժ խաղարկութիւնը, իսկ մարզիչ Աւօ Պէլքանեանի հսկողութեամբ քա-

անկախութեան տօնին Նուիրուած ազգային հայրենասիրական երգերով ելոյթ ունեցան հանրաժանօթ մեներգողներ՝ Ճորճ Գալայճեան, Աշոտ Թեմիրեան, Խաչիկ Աճեան, Լուսի Յովհաննէսեան եւ Կասիա Պաղտիկեան, երգեհոնի ընկերակցութեամբ Ներսէս Թովմեանի:



Համայնքապետի ներկայացուցիչ Տէր Կոմիտաս Քիւն. Տատաղլեան, ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգսեան, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժորայր Ռէիսեան, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովի ներկայացուցիչ Կարօ Իւզպաշեան, Ազգ. Վարչութեան, հալէպահայ միութիւններու ներկայացուցիչներ, Պասա Կուսակցութեան Հալէպի քարտուղարը, Հալէպի Երիտասարդութեան Պետական գրասենեակի տնօրէնը, Հալէպի Գրադարաններու եւ Կազմակերպութիւններու գրասենեակի տնօրէնը, Հալէպի նահանգապետարանի Գործադիր Մարմինի փոխտնօրէնը, Սուրիոյ Մարզական Ընդհանուր Միութեան Հալէպի տնօրէնը սկաուտներ, մարզիկներ եւ հագարաւոր հանդիսականներ:

Իսկէնտերունը բռնագրաւող թրքական ծաւալապաշտական քաղաքականութեան դէմ, վկայ վերջին տարիներուն Սուրիոյ դէմ հիւսուած բոլոր այն թրքական դաւերը, որոնք կը նպատակադրէին Սուրիոյ դիմագիծը փոխել, անոր քաղաքակրթութիւնը ոչնչացնել ու միջնադարեան վիճակին վերադարձնել Սուրիան: Անոնք, սակայն, չհասան իրենց նպատակին ու Սուրիան վերստին իր յաղթանակը յայտարարեց շնորհիւ իր քաջարի բանակին, երկրի խոհեմ ղեկավարութեան, նախագահ տըքթ. Պաշշար ալ Ասատի հաւասարակըջնուած քաղաքականութեան եւ պայքարունակ ժողովուրդին:

Հայ Աւետարանական Համայնքին կողմէ բացման խօսք արտասանեց Սեւան Զիրիշեան, որ ըսաւ. «Ողջոյն քեզ, նահանջ չճանչցող հալէպահայութիւն»:

Այսօր գիրար պիտի շնորհաւորենք ազատ եւ անկախ Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակին առիթով, որպէսզի միասնաբար շարունակենք մեր հաւաքական երազը՝ ազատ, անկախ եւ Միացեալ Հայաստանը աստիճանաբար իրականութեան վերածելու ուղին:

Մեր պատմութեան լուսաւոր եւ պայծառ փուլերուն եւ նուաճումներուն առջնութիւն, մարզիկներուն սաւառնաթիւ արծիւի սլացքը խորհրդանշող ներկայացումները ոգեւորեցին ներկաները:



րաթի առոյգ մարզիկներուն սաւառնաթիւ արծիւի սլացքը խորհրդանշող ներկայացումները ոգեւորեցին ներկաները:

Ներկաները խանդավառութեամբ, սուրիական եւ հայկական դրօշակներ բարձրացնելով ընկերակցեցան երգողներուն ու սրահէն ներս տիրեց տօնական մթնոլորտ:

Այնուհետեւ, հալէպահայ մարզիկներն ու սկաուտները մեծ խանդավառութիւն ստեղծեցին, երբ տարագնեցան, Հայաստանի եւ Սուրիոյ դրօշներով, խումբ առ խումբ տողանցեցին մարզ աղաշտին վրայ ու

Աւելի քան երկու ժամ տեւող շքեղ այս փառատօնը աշխատանքի նոր թափով ու եռանդով օժտեց մասնակից միութեանականները: